Azg

Azg armenian daily

9 ԱՊՐԻԼ 2003 ՇԱԲԱԹ 67(2752)

104 կոնգրեսականներ Բուշից պահանջում են օգտագործել «ցեղասպանություն» բառը

ԱՆԿԱՐԱ, 8 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Թուրքիայի ԶԼՄ-ները հաղորդում են ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության տարելիցի օրը, ԱՄՆ նախագահի ավանդական ելույթում «ցեղասպանություն» բառը կիրառելու համար «ԱՄՆ նախագահի հանդեպ ճնշման ուժեղացման վերաբերյալ»:

Ըստ Թուրքիայի «Սաբահ» օրաթերթի, ԱՄՆ Կոնգրեսի 104 անդամներ այս բովանդակությամբ նամակ են հղել Ջորջ Բուշին: Ինչպես հայտնի է նախորդ ելույթներում Բուշը ինչպես եւ մյուս նախագահները միտումնավոր խուսափել են «ցեղասպանություն» բառից:

Կոնգրեսի Թուրքիայի հետ բարեկամության խմբի ներկայացուցիչները այս առիթով հայտարարել են, որ ներկայացուցիչների պալատի 435 անդամներից 120-ը հանդիսանում են հայկական հարցերով հանձնախմբի անդամ եւ ներկա նախաձեռնությունը ներկայումս կարող է պարզորոշ ցույց տալ Կոնգրեսում ուժերի դասավորության ողջ ներկապնակը: «Մենք մտահոգ ենք», այս առիթով հայտարարել են նշված խմբի անդամները:

ԱՄՆ Հայկական համագումարի երեւանյան գրասենյակը նշեց, որ այս մասին առավել մանրամասն տեղեկատվություն կտրամադրվի առաջիկա օրերին:

Տեղեղումներից տուժել են 36 խաղաքային ու գյուղական համայնքներ

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հանրապետության որոշ մարզերում հեղեղումների հետեւանքով առաջացած իրավիճակը շարունակում է լարված մնալ. Հայց հիմնականում արձանագրվում է ջրի մակարդակի իջեցում: ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության օպերատիվ կառավարման շտաբն ուշադրությամբ հետեւում է հատկապես Արագածոտնում, Սյունիքում, Տավուշում եւ Գեղարքունիքում ծավալվող իրադարձություններին, որոնց ռելիեֆային պայմանները, բազմաթիվ վտակներով գետերը պարզապես խթանում են հորդացումները: Հայաստանի տարածքի մի զգալի հատվածին հարվածած տարերային աղետի դեմ միաբանվել են տեղական համայնքների, գյուղնախարարության, Ջրային տնտեսության պետական կոմիտեի ուժերը: Ի՞նչ վտանգներով է հղի իրավիճակը, ի՞նչ կանխատեսումներ են անում մասնագետները: «Ազգի» հարցերին պատասխանում է Արտակարգ իրավիճակների եւ քաղաքացիական պաշտպանության վարչության տարերային աղետների վտանգի գնահատման բաժնի պետ Կարեն Դուրգարյանը:

– Անկասկած, առաջին հերթին Թիի հեւազոտվի ջրամբարների վիճակը:

– Ջրամբարների վիճակը վերահսկում է Ջրային տնտեսության պետական կոմիտեն, բոլոր ջրամբարների մոտ խիստ հերթապահություն է սահմանվել: Ոչ լավատեսական կանխատեսումներ կան, որ Հրազդան գետի, Մարմարիկի հորդացումները կարող են այնքան ուժգնանալ, որ Աղբյուրակի ջրամբարից բացթողումների հետեւանքով սողառնալից վիճակ ստեղծվի Հրազդան գետի առափնյա գյուղերի՝ Բջնի, Արզական, Քարաբամբ եւ այլն, նաեւ Արարատյան դաշտի որոշ գյուղերի համար: Տես էջ 2

ՊԱՏԵՐԱԶՄ

Ամերիկյան զորքը գրավեց Բաղդադի կամուրջներից երկուսը

Սարսափելի օր լրագրողների համար: Բասրացիք թալանում են Բասրան:

Ինչպես կանխատեսել էինք նախորդ օրը, ամերիկյան զորքը երեկ դիրքերն ամրապնդեց Բաղդադի արեւմտյան եւ հարավ-արեւմտյան հատվածում, Տիգրիս գետի այդ ափին: Երեկվա ռազմական գործողությունները կարելի է կոչել «կոիվ կամուրջների համար»: Ամերիկյան «Աբրահամս» տիպի ծանր հրասայլերը դիմադարձ կրակի տակ առաջացան ու գրավեցին 2 կարեւոր կամուրջներ Տիգրիսի վրա՝ «Ալ Ռաշիդ» եւ «Ալ Ջումհուրիա»: Բնականաբար, նրանց օգնում էր օդուժը, որի տիրապետությունը բացարձակ էր Բաղդադի երկնքում: Հատկապես ակտիվ էին B-1 եւ B-2 ռազմօդանավերը, որոնք ռմբահարում էին կամուրջների արեւելյան հատվածում տեղավորված իրաքյան ուժերի դիրքերը: Մի պահ նրանք 2 տոննանոց ռումբեր գցեցին «Ալ Մանսուր» թաղամասում մի շենքի վրա, որտեղ գտնվող մի ռեստորանում, ըստ հետախուզական տվյալների, ժողովի էր հավաքվել նախագահ Սադդամ Հուսեյնն իր 2 որդիների եւ շուրջ 50 զինվորականների հետ: Բազմաթիվ հարվածներից շենքը փլվեց: Փլվեցին նաեւ հարեւան 2 շինությունները, որտեղ խաղաղ բնակիչներ էին ապրում: Սադդամի եւ ընկերակիցների մասին դեռեւս տեղեկատվություն չկա: (Տես նաեւ էջ 5):

Երեկ ծանր, սաստափելի օր էր հակահրաքյան պատերազմը լուսաբանող միջազգային լրագրողների համար:

Առավոտյան վերոհիշյալ կամուրջներից արեւելյան ափին գտնվող «Ալ Ռաշիդ» շենքում արաբական 2 հեռուստաընկերություններ՝ «Ալ Ջազիրա» եւ «Աբու-Դաբի TV», ամերիկյան հրասայլերի ուղիղ կրակի տակ ընկան: Զոհվեցին «Ալ Ջազիրայի» 2 լրագրողներ, մինչ «Աբու-Դաբի TV»-ի 25 լրագրողներ բանտարկված մնացին խաչաձեւ կրակի տակ, առանց դուրս գալու հնարավորության: Ավելի ուշ, ռմբահարվեց «Պաղեստին» հյուրանոցը, որտեղ լրատվական տարբեր կազմակերպություններ հաստատել են իրենց գրասենյակը: Դարձյալ հրասայլի կրակից զոհվեցին Ռոյթեր գործակալության ուկրաինացի օպերատորը եւ իսպանական հեռուստաընկերության լրագրողը: Մի քանի ուրիշ լրագրողներ վիրավորվեցին: Ամերիկյան կողմը նախ հերքեց, հետո ավելի ուշ ընդեց, որ նշյալ շենքերից դիպուկահարի կրակ է բացվել իրենց ուղղությամբ: Գրեթե բոլոր լրագրողները, այդ թվում եւ ամերիկյան ընկերությունների, հաստատեցին, որ այդ շենքերից ոչ մի կրակոց չէր արձակվել:

Մյուս կողմից, երեկ համատարած թալան սկսվեց Հարավային Բասրա քաղաքում, որն այժմ գրեթե ամբողջովին գտնվում է անգլիական ուժերի վերահսկողության տակ: Բասրայի խուժանը, օգտվելով քաղաքում կարգուկանոնի բացակայությունից, սկսեց թալանել ամեն ինչ՝ 5 աստղանի հյուրանոցի կահույքից մինչեւ խանութների եւ գրասենյակների պարունակությունը, մինչեւ անգամ կարմիր խաչի եւ այլ կազմակերպություններին պատկանող պահեստները: Տեղի անգլիական զորքի հրամանատարությունը հայտարարեց, թե ոչինչ չեն կարող անել թալանին վերջ տալու համար, իրենք ոստիկան չեն, այլ բանակային:

Ասված մի առաստ, որ նույնը կրկնվի 5,5 միլիոնանոց Բաղդադ մայրաքաղաքում:

Սահմանադրական հանրաքվե մայիսի 25-ին

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 111-րդ հոդվածով, «Հանրաքվեի մասին» օրենքի 7-րդ հոդվածով եւ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվե նշանակելու մասին: Հրամանագրի համաձայն, Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեն նշանակվել է 2003 թվականի մայիսի 25-ին:

«Հոկտեմբերի 27»-ի դատը կվերսկսվի ապրիլի 18-ին

ԵՐԵՎԱՆ, 8 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հոկտեմբերի 27»-ի քրեական գործով դատաքննությունը կվերսկսվի ապրիլի 18-ին: Այս մասին Արմենպրեսի թղթակցին ասաց դատավորի օգնական Մարինե Մարտիրոսյանը: Նշենք, որ դատավարությունն ընդմիջվել էր այս տարվա հունվարի 15-ին, Կենտրոն-Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում: Ուզունյանի վատառողջության (թոքերի բորբոքում), պատճառով: Դատավորը տնային պայմաններում բուժման կուրս անցնելուց հետո, ավելի ուշ նաեւ ստացիոնար բուժում ստացավ՝ բրոնխիտ ախտորոշումից հետո:

Երթեւեկության սահմանափակում

ԵՐԵՎԱՆ, 8 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ապրիլի 9-ին մայրաքաղաքի «Հանրապետության» հրապարակում նախատեսված միջոցառումների անցկացման կապակցությամբ առավոտյան ժամը 9.00-ից մինչեւ 15.00-ը հրապարակում եւ հարակից փողոցներում դադարեցվելու է տրանսպորտային միջոցների երթեւեկությունը: Այս մասին Արմենպրեսին հայտնեցին ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունում: Պետավտոտեսչությունը զգուշացնում է, որ անխափան եւ անխոչընդոտ երթեւեկության ապահովման նպատակով անհրաժեշտ է զերծ մնալ քաղաքի կենտրոնական փողոցներ մուտք գործելուց, երթեւեկել շրջանցիկ փողոցներով:

ԲԵՅՐՈՒԹ

Ռուբեն Միրզախանյանն այցելեց Լիբանան

Ապրիլի 4-6-ը Լիբանանում էր գտնվում Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը:

ՀՌԱԿ ատենապետը հանդիպումներ է ունեցել Լիբանանի քաղաքական շրջանակների ներկայացուցիչների հետ, հանդես է եկել հրապարակային դասախոսությամբ Բեյրութի Վահան Թեքեյան կենտրոնում:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել Ռուբեն Միրզախանյանի հանդիպումը Լիբանանի Հանրապետության վարչապետ, նշանավոր գործարար Ռաֆֆիկ Հարիրիի հետ, որի ընթացքում երկրի վարչապետն իր ամենայն հարգանքն է հայտնել հայ ժողովրդի եւ ՀՀ իշխանությունների նկատմամբ:

Շաբաթավերջին Պուտին, Շիրակ, Շրյոդեր ժողով Մոսկվայում

Երեկ գիշեր հայտնի դարձավ, որ առաջիկա շաբաթավերջին հակահրաքյան պատերազմին դեմ երկրների պետերը, գլխավորությամբ նախագահներ Վլադիմիր Պուտինի, Ժակ Շիրակի եւ կանցլեր Գերհարդ Շրյոդերի, գագաթաժողովի են հավաքվելու Մոսկվայում: Նախապես հայտարարված էր, որ ժողովին մասնակցելու է նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը, որն այս օրերին ձեռնարկում է շրջայց դեպի եվրոպական տարբեր մայրաքաղաքներ: Ավելի ուշ, ՄԱԿ-ի կենտրոնակայանից հայտարարվեց, որ Անանը չի մասնակցի այդ գագաթաժողովին:

Սկանդալ Թուրքիայի կառավարությունում

ԱՆԿԱՐԱ, 8 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայտնի է դարձել, որ թուրքական Ազգային գաղափարախոսության կազմակերպությունը ահաբեկչական համարող եւ այդ կազմակերպությունից սերելու համար Թուրքիայի կառավարող Արդարություն եւ զարգացում կուսակցությանը ստիպմունքի հասցրած ահաբեկչության դեմ պայքարի մասին միջազգային համաձայնագրի նախագիծը, «առանց կարդալու» ստորագրել են եւ՝ Թուրքիայի վարչապետը, եւ՝ որոշ նախարարներ:

Թուրքական «Հուրրիյեթը» գրում է, որ Թուրքիայի եւ Գերմանիայի միջեւ ահաբեկչության դեմ պայքարի եւ ահաբեկչության մեջ ինչ-ինչ կազմակերպություններին՝ այդ թվում նաեւ թուրքական Ազգային գաղափարախոսության կազմակերպությանը, մեղավոր ճանաչող համաձայնագրի 7 էջից բաղկացած նախագիծը, որը ներկայացվել է խորհրդարանի վավերացմանը, ստորագրել են վարչապետ Թայըփ Էրդողանը եւ նախարարների խորհրդի որոշ անդամներ: Բանն այն է, որ ԱԶԿ-ականների հիմնական կազմը սերում է այդ «ահաբեկչական» համարվող կազմակերպությունից եւ ստացվում է, որ ստորագրելով այդ փաստաթուղթը, թուրքական կառավարությունը «խոստովանում է», որ գրեթե ամբողջ կազմով ահաբեկչական է: Հայտնի է դարձել, որ կառավարության անդամները համաձայնագրի այդ նախագիծը ստորագրել են «մեխանիկորեն՝ առանց կարդալու», ինչը ստորագրումից հետո, բաթաթվա վերջին ուղարկվել է Թուրքիայի խորհրդարանի վավերացմանը: Խորհրդարանի խոսնակ Բյուլենթ Արինչն ասել է, որ ԱԶԿ-ին «ահաբեկիչ» ճանաչող համաձայնագրի տակ, վարչապետի հետ միասին, ստորագրել են նաեւ Ազգային գաղափարախոսություն կազմակերպությունից սերած փոխվարչապետներ Աբդուլլա Գյուլը, Աբդուլլաթիֆ Շենները եւ Մեհմեթ Ալի Շահինը, տնտեսական զարգացման նախարար Զեֆի Էրգեզենը եւ շրջակա միջավայրի նախարար Օսման Փեփեն: Իսկ կառավարության խոսնակ եւ արդարադատության նախարար Ջամիլ Չիչեքն ասել է. «ԱԶԿ-ն ամբողջությամբ Ազգային գաղափարախոսությունը չի ներկայացնում, պարզապես այնտեղ կան այդ կազմակերպության նախկին անդամներից մի քանիսը: Հասկանալի է, որ միջազգային համաձայնագիրը մենք չենք կարող փոխել: Սակայն խորհրդարանը կարող է հանդես գալ ահաբեկչական կազմակերպությունների մասով փոփոխություն մտցնելու եւ համաձայնագրի վավերացումը առայժմ հետաձգելու առաջարկությամբ»:

ԸՆԹԱՑԻԿ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Եվս 57 նորագիրներ եւ մեկ նորաբաց ակումբ

– Ես լրջորեն ուսումնասիրել եմ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության պատմությունն ու ծրագիրը եւ գտնում եմ, որ միայն այս կուսակցությունն է առաջնորդվում այն գաղափարներով, որոնց համակիրն եմ,– ասաց Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դասախոս, լեզվաբան Մանուշակ Սողոմոնյանը երեկ Թեթեյան կենտրոնում կայացած ժողովի ժամանակ, ՀՌԱԿ անդամատոմս ստանալիս:

Կարինեի հետ նոր անդամատոմսեր ստացան եւս 18 նորագիրներ՝ Կարինե Առաքելյանը, Հերմինե Առաքելյանը, Սարգիս Պետրոսյանը, Լիանա Պետրոսյանը, Լիանա Խուրշուդյանը...

Նոր անդամատոմսեր հանձնելով, ՀՌԱԿ ատենադպիր Մեսրոպ Հարությունյանը ողջունեց կուսակցության անդամներին, խոսեց կուսակցության անցած ճանապարհի, այսօրվա խնդիրների, ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններին կուսակցության մասնակցության մասին:

– Այժմ, երբ անկասկած բարձրացել է կուսակցության հեղինակությունը, մենք վստահորեն կարող ենք ասել, որ մեծ հնարավորություններ ունենք ընտրություններում հաղթանակ տանելու եւ զգալի պատգամավորական տեղեր նվաճելու համար:

Ընդունելություն կատարվեց մայրաքաղաքի «Ծոփք», «Խնուս», «Կարին», «Կենտրոն», «Շենգավիթ», «Այգեստան» ակումբներում: 57 նորագիրներ ուխտեցին ծառայել երկրին ու ժողովրդին՝ ՀՌԱԿ դրոշի ներքո:

Կազմավորվեց նաեւ նոր ակումբ՝ «Հայքը», որի անդամ 19 նորագիրներն ատենապետ ընտրեցին Արթուր Հարությունյանին:

Ս. Մ.

Ամերիկյան «Սավ-Օն-Մոնոլայթ» ընկերությունը պատրաստվում է գնել «Արմինկո» ԲԲԸ-ն

ԵՐԵՎԱՆ,8 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամերիկյան «Սավ-Օն-Մոնոլայթ» ընկերությունը պատրաստվում է լուրջ ներդումներ կատարել Հայաստանի հեռահաղորդակցության տուկայում՝ գնելով ՀՀ-ում ինտերնետային կապի ապահովման առաջատար «Արմինկո» բաց բաժնետիրական ընկերությունը: Վերջինս, որ ներկայումս սպասարկում է ՀՀ եւ ԼՂՀ Ինտերնետ կապից օգտվողների 2/3-ին, ըստ միջազգային անկախ աուդիտորների, ունի 3,7 մլն ԱՄՆ դոլար գնահատվող հեռահաղորդակցական կապի ապահովման ենթակառուցվածք: «Սավ-Օն-Մոնոլայթ» ընկերությունն իր գոյության 10 տարիների ընթացքում ԱՄՆ-ից բացի հասցրել է հեռահաղորդակցության ոլորտում ներդումներ կատարել նաեւ Բելգիայում, Ռուսաստանի Դաշնությունում եւ Գանայում: Չեռք բերելով Հայաստանի ինտերնետային տուկայի առաջատար ձեռնարկությունը, ընկերությունը նպատակ ունի առաջիկա 5 տարիների ընթացքում այնտեղ եւս 7,3 մլն դոլար ներդում կատարելու միջոցով հանրապետության ինտերնետային ապահովման ցանցը բարձրացնել հասանելիության զարգացման մակարդակի:

Ինչպես նշեց «Սավ-Օն-Մոնոլայթ» հիմնադիր նախագահ Հրանտ Դաղասանյանը, իրենք այդ քայլով բոլորովին չեն հավակնում մենաշնորհային դիրք գրավել Հայաստանի ինտերնետային տուկայում, այլ պարզապես ուզում են որակապես նոր աստիճանի հասցնել ինտերնետային ծառայությունների մատուցման մակարդակը ՀՀ-ում:

Մասնավորապես նախատեսվում է ոչ միայն կտրուկ ընդլայնել ինտերնետային կապից օգտվողների շրջանակը՝ ընդգրկելով նաեւ հանրապետության գյուղերն ու փոքր քաղաքները, այլեւ էականորեն բարելավել ինտերնետային սպասարկումների որակն ու ներդնել հեռահաղորդակցային ծառայությունների նոր՝ այսօր դեռեւս Հայաստանում գոյություն չունեցող տեսակներ: Ներդրումային ծրագրի հաջող իրականացումը թույլ կտա նաեւ հինգ տարի հետո արդեն շուրջ 5 անգամ իջեցնել այսօր Հայաստանում մատուցվող ինտերնետային ծառայությունների գինը:

«Արմինկո» ԲԲԸ գլխավոր տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանի հավաստմամբ, իրենց բարձր վարկանիշի շնորհիվ այսօր ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումով շահագրգռված են նաեւ մի քանի այլ ընկերություններ (մասնավորապես՝ ֆրանսիական «Ալ Կատելը»), սակայն «Սավ-Օն-Մոնոլայթ» ընկերության առաջարկը մի շարք առումներով նախընտրելի է, քանի որ վերջինս ունենալով հայկական ծագում, կենսականորեն շահագրգռված է հեռահաղորդակցության հայկական ցանցի իրական զարգացման գործում: Նշանակալի ներդումներ անելուց զատ, այս ընկերությունը ոչ միայն չի պատրաստվում փոխել «Արմինկոյի» նախկին կարգավիճակը, այլեւ առաջիկա 2-3 տարիներին երաշխավորում է վերջինիս գործող աշխատակազմի եւ տնօրինության պահպանումը, քանի որ բարձր է գնահատում նրանց մասնագիտական որակը: Ավելին. առաջիկա 3 տարիների ընթացքում նախատեսվում է ավելացնել եւս շուրջ 300 աշխատատեղ, այդ թվում՝ հնարավորություն կստեղծվի աշխատանքով ապահովել մոտ 100 բարձր որակավորում ունեցող ծրագրավորողների եւ վերլուծաբանների՝ նպաստելով հանրապետությունից ուղեղների արտահոսքի կանխմանը: Կատարելագործվելու է նաեւ ընկերության կառավարման համակարգը՝ ուղղորդվելով դեպի մատուցվող ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացումը:

Այս գործարքի կարեւորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, ինչպես հավաստեցին երկու ընկերությունների ղեկավարները, որ արդյունքում հայկական ընկերությունը չի վերածվում զուտ ամերիկյան ձեռնարկության: «Արմինկոյի» ներկայիս բաժնետերերին հնարավորություն է ընձեռվելու դառնալ ամերիկյան ընկերության բաժնետերեր եւ ամեն ինչ արվելու է, որպեսզի առաջիկա 5-10 տարիների ընթացքում նորացված «Արմինկոյի» գործունեությունից ստացվող ողջ շահույթը ծախսվի հենց նույն ընկերության զարգացման վրա՝ դուրս չգալով հանրապետությունից:

Գործարքի կողմերի համոզմամբ, հանրապետությունում ստեղծված քաղաքական կայունությունը եւ իրենց կողմից որդեգրած մոտեցումը թույլ կտան Հայաստանը վերածել ժամանակակից բարձրագույն տեխնոլոգիաների վրա հիմնված հեռահաղորդակցական ծառայություններ մատուցող տարածաշրջանային առաջատար կենտրոնի, որը կունենա նաեւ ոլորտի կադրերի պատրաստման ազգային դպրոցը:

Եթե Եվրախորհրդի առջեւ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումը ժամանակին չիրականացվի, ապա լուրջ բարդություններ կունենանք

«Ազգի» ընթերցողներին տեղեկացրել ենք Երեւանի մամուլի ակումբի, Ֆր. Էբերտի անվ. հիմնադրամի եւ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի աջակցությամբ Ծաղկաձորում կազմակերպված եռօրյա սեմինարի ընթացքում բարձրացված մի շարք օրինագծերի շուրջ քննարկումների մասին, որոնցից առանձնահատուկը ՀԼՄ-ների օրենքն էր եւ թիվ 6-դ արձանագրության վավերացումը, որոնք եթե մինչեւ հունիսի 1-ը չընդունվեն, ապա լուրջ բարդությունների առաջ կկանգնի Հայաստանը: «Այդ դեպքում ի՞նչ է սպասվում» հարցին պարզաբանումներ տվեց արտաքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Մարտիրոսյանը:

– Որեւէ երկիր, որը գտնվում է մոնիտորինգի պարտավորությունների տակ, բնական է, կունենա մտահոգություն: Բոլոր օրենսդրական փոփոխությունները, իրականացվել են Եվրախորհրդի մասնագետների, փորձագետների, մասնավորապես Վենետիկի հանձնաժողովի մասնագետների հետ եւ, համապատասխան փորձաքննությունից հետո, տրվել է նրանց դրական եզրակացությունը: Այդ ամենը խորհրդարանը հաշվի առնելով, կընդունի համապատասխան օրենսդրական ակտեր: Իսկ ինչ վերաբերում է մահապատժի վերացմանը՝ 6-րդ արձանագրության վավերացմանը, դա քաղաքական խնդիր է, նշեց պրն Մարտիրոսյանը, եւ ուղղակի կախված է այսօրվա խորհրդարանում ներկայացված ուժերի քաղաքական կամքից, թե որքանով նրանք հետեւողական կլինեն իրենց ստանձնած պարտավորությունների իրականացման գործում:

– Իսկ եթե սահմանված ժամկետում չիրականացրի ստանձնած պարտավորությունները, ի՞նչ կարող է լինել:

– Եվրախորհրդի կանոնադրությունը նախատեսում է այդպիսի դեպքեր, երբ որեւիցե երկիր չի կատարում կամ շեղվում է ստանձնած պարտավորություններից (արդեն եղել են նման դեպքեր հարեւան երկրների հետ), գոյություն ունի պատժամիջոցների փաթեթ, որն ավարտվում է երկրի անդամակցության կասեցմամբ:

Պրն Մարտիրոսյանը հույս հայտնեց, որ մեր քաղաքական ուժերը կդրսեւորեն համապատասխան քաղաքական հասունություն ու հետեւողականություն, որպեսզի այն պարտավորությունները, որ մենք ստանձնել ենք, կարողանանք արժանապատիվ ձեւով իրականացնել:

Մինչ այժմ ընթացող բոլոր գործընթացները, ուշացումներն ու ձգձգումները՝ կապված պարտավորությունների իրականացման հետ, համաձայնեցված են Եվրախորհրդի հետ, բերվել են սահմանադրական փոփոխությունների փաստաթղթերը: Իսկ մահապատժի հետ կապված հարցը մինչ օրս Եվրոպացիները միանշանակ չեն ընդունում, բայց լուռ են դեռ: Նրանք տարբեր փաստաթղթերում նշել են, որ երբեք ստանձնած պարտավորություններից հրաժարվել իրենք թույլ չեն տա: Մինչ օրս Հայաստանը տվել է որոշակի բացատրություններ՝ հիմնականում կապված հոկտեմբերի 27-ի եւ դրան հաջորդած իրադարձությունների հետ: Մեզ հաջողվել է մեկ տարին երկարաձգել մինչեւ հունիսի 1-ը: Այսինքն՝ մինչ այդ մենք մեր քննարկումները պետք է ավարտենք: Հունիսի 1-ին Եվրախորհուրդը կամ արձանագրելու է, որ Հայաստանի Հանրապետությունը կատարել է ստանձնած պարտավորությունները, կամ՝ ոչ»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Հեղեղումներից տուժել են 36 քաղաքային ու գյուղական համայնքներ

Սկիզբը էջ 1

Այս պահին կարեւորը ջրամբարներից ջրի բացթողումների կարգավորումն է, նորմայի սահմաններում պահելը: Մեր մասնագետներն այցելել են բոլոր վտանգավոր ջրամբարները, ստուգվել է դրանց տեխնիկական վիճակը, անհրաժեշտ տեխնիկա է հավաքվել կասկածելի հատվածներում: Առանձնակի ուշադրություն է դարձվում հատկապես պատվարների ամրությանը: Մասնագետները պետք է զգոն լինեն՝ չսխալվելու, թե ե՞րբ, ո՞ր պահին ինչքա՞ն ջուր պետք է բաց թողնել, որպեսզի վտանգը շրջանցվի: Նույն զարգացումներն են կանխատեսվում նաեւ Երեւանյան լճի համար: Եթե դարձյալ Աղբյուրակի ջրամբարից մեծաքանակ ջուր հասնի Երեւանյան ջրամբար, հետո լցվի լիճ, նույն բանն էլ այստեղ է սպասվում, եւ այստեղ էլ հերթապահություն է սահմանվել: Իբրեւ խնդրի լուծման տարբերակ առաջարկվում է այդ ջրերը բաց թողնել կամ Արզնի-Շամիրամ, կամ Էջմիածնի ջրանցքով, որպեսզի մինչեւ Երեւանյան ջրամբար հասնելը լարումը թուլանա: Ընդհանրապես բոլոր անհրաժեշտ հաշվարկներն արվում են՝ ճշգրտելու, թե վթարների դեպքում ո՞ր ջրամբարի հետ կապված ինչ միջոցառում պետք է իրականացնել:

– Որքա՞ն կարող է շարունակվել այս վիճակը:

– Մենք անընդմեջ կապ ենք պահպանում հիդրոօդերեւութաբանների հետ, օրը 2 անգամ տեղեկություն են տալիս մեզ գետերում առկա ջրի քանակի վերաբերյալ եւ, ըստ այդ տվյալների, մի քանի գետերում կամ ընդհատվել, կամ նվազել է ջրի մակարդակի բարձրացումը: Նրանք տեղեկացնում են նաեւ, որ մի քանի օր անց հեղեղի ընդգրկած հիմնական հատվածներում ջերմաստիճանը 4-8 աստիճանով կիջնի, եւ հեղեղումները կդադարեն:

– Ինչքա՞ն բնակչություն է տարհանվել հեղեղված եւ հեղեղման ենթակա տարածքներից:

– Տարհանվել են Շիրակի մարզի 42, Գավառ քաղաքի 30, Իջեւանի 17, «Ախթալա» երկաթգծի կայարանամերձ տների բնակիչներ: Ջուրը լցվել է այդ տների նկուղները, առաջին հարկերը, դրանք բնակության համար անպիտան դարձրել, ջրածածկել վարելահողերը, վնասել էլեկտրասնուցման ենթակառուցվածքները, առափնյա հատվածներին մոտ տնամերձերը: Այս պահին մենք առաջարկ ենք ներկայացրել կառավարություն՝ տարհանելու նաեւ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի 10 տների բնակիչների:

– Անցյալ տարի գարնանը դարձյալ հեղեղում եղավ այդ տարածքում եւ կրկին բնակիչները տեղահանվեցին:

– Այո, այստեղ գործում է մեծ սողանք, որ աստիճանաբար տեղաշարժվում է դեպի Աղստեւի հունը, եւ մոտակա բնակավայրերի ջրածածկման սպառնալիք ստեղծում: Հաղարծնի սողանքը լավ ուսումնասիրվել է, բայց ամրացման միջոցառումները ֆինանսների պատճառով դադարեցվել են: Արդեն 7 տարի ոչինչ չի արվում, իսկ դա չափազանց վտանգավոր է, եւ սողանքն իր գործն անում է:

– Հանրապետության տարածքի մեծ մասը վարակված է սողանքներով...

– Հենց այսօր տեղեկություն ենք ստացել, որ ակտիվացել է նախկին Ղուրղուն, այժմ Հովք գյուղի սողանքը (Տավուշի մարզ): Այն մեծ վնասներ է պատճառել հատկապես Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհահատվածին, որն անընդհատ ձեւախախտվում է, նորոգվում է, նորից ձեւախախտվում: Ակտիվացել են մի քանի սողանքներ նաեւ Իջեւանի եւ Կարմիրի կողմերում: Այս ամենի պատճառը ծյան հալոցքը, անձրեւներն ու հորդացումներն են: Ստացվել են Լոռու եւ Տավուշի մարզերի մարզպետների նամակ-ահազանգերը, այսօր խմբեր ենք ուղարկելու այդ մարզերը: Իրավիճակի մասին անընդհատ տեղեկացնում են նաեւ մեր մարզային կառույցները:

Վնասի չափերը դեռեւս ճշտված չեն, տվյալները հստակեցվում են:

Ըստ Արտակարգ իրավիճակների վարչության տվյալների, հեղեղումներից տուժել են 36 քաղաքային ու գյուղական համայնքներ, ջրածածկվել են 3755 հա վարելահողեր, թակարդում է հայտնվել 200 գլուխ անասուն: Նոր հեղեղումների կանխարգելմանը եւ արդեն կատարվածի հետեւանքների վերացմանը լծվել են Արտակարգ իրավիճակների վարչության արագ արձագանման մարզային ստորաբաժանումները եւ հրշեջ զորամասերը, 53 միավոր ինժեներական տեխնիկա:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի անթողչելի թէ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Սահմանադրական դատարանում կողմերը «ժամանակ են ապանում»

Հիմնականում զվարթ մթնոլորտում

Երեկ Սահմանադրական դատարանի նիստի շարունակությունն անցավ նույն կերպ՝ ձգձգվելով, հնարավորինս ծավալվելով յուրաքանչյուր հարցի շուրջ: Երեկ Ստեփան Դեմիրճյանի նախորդ ներկայացուցիչների հետ մեկտեղ ներկայացել էր նաեւ Թաթուլ Մանասերյանը:

Դիմող կողմը միջնորդությամբ հանդես եկավ, որպեսզի դատարան հրավիրվի Փախստականների եւ միգրացիայի վարչության պետ Գագիկ Եգանյանը: ԱԴ միջնորդություն ներկայացվեց նաեւ ԿԸՀ նախագահ Արսակ Սահրադյանին դատարան հրավիրելու մասին՝ պատճառաբանելով, որ մարտի 5-11-ը հանձնաժողովը իբր որեւէ դիմում-բողոք չի ստացել, ԿԸՀ նախագահն էլ միանձնյա է որոշել դրանց հետ կապված հարցերը:

Այնուհետեւ դատարանն անցավ դիմող կողմին հարցեր տալուն: Առաջինը հարցեր սկսեց տալ պատասխանող կողմի ներկայացուցիչ Տիգրան Մուկուչյանը: Այս նիստում տպավորությունն այնպիսին էր, որ նիստը հնարավորինս երկարաձգելու, տեսական, աբստրակտ հարցեր քննարկելու մարտավարություն կամ ռազմավարություն է մշակել նաեւ ԿԸՀ-ն ներկայացնող կողմը: Մասնավորապես, մի որոշ ժամանակ Տիգրան Մուկուչյանը եւ դիմող կողմի ներկայացուցիչ Աշոտ Սարգսյանը տեսական «դեգերումներով» փորձում էին պարզել, թե գործում ներկայացված որ նյութերն են փաստաթուղթ, որոնք են փաստական հանգամանքներ եւ դրանցից որոնք կարող են համարվել ապացույցներ:

Տիգրան Մուկուչյանին, բացի վերը նշված տեսական հարցերից, հետաքրքրում էր նաեւ, թե բողոք ներկայացնելու դեպքում վստահված անձն արդյոք պե՞տք է նշի հասցեատեր, եւ եթե չկա հասցեատեր որպես այդպիսին, որպես ինչ գնահատել տվյալ դիմում-բողոքը: Թե օրենսդրական որ դրույթի հիման վրա Ընտրական օրենսգրքով չնախատեսված արձանագրությունները կարող են դառնալ ապացույց՝ Տիգրան Մուկուչյան-Աշոտ Սարգսյան երկխոսությունը բավականին երկար տեւեց: Ուստի ԱԴ նախագահ Գագիկ Հարությունյանը հիշեցրեց, որ նման ընդհանուր խոսակցությունները ոչինչ չեն կարող տալ ոչ մի կողմին: Ուստի պետք է հարցերը դրվեն կոնկրետության մեջ, պատասխանները՝ նույնպես:

Երբ Տիգրան Մուկուչյանը ներկայացրեց կոնկրետ մեկ արձանագրության օրինակ, առանց հասցեատիրոջ, Աշոտ Սարգսյանը համաձայնեց, որ դա ապացույց չէ: Չնայած, ըստ Աշոտ Սարգսյանի, ընտրական հանձնաժողովների նախագահները չեն ներկայացել, որի պատճառով հասցեատեր չի նշվել:

Այնուհետեւ Տիգրան Մուկուչյանը սկսեց հարցեր տալ ԵԱՀԿ դիտորդական առաքելության մեզ հայտնի եզրակացության մասին, հիմնականում շեշտադրելով, թե ինչ հիմունքներով կարող է նշված եզրակացությունը համարվել ապացուցված փաստը:

Ստեփան Դեմիրճյանի ներկայացուցիչը պատասխանեց, որ իր համար ԵԱՀԿ դիտորդների եզրակացությունն ապացուցված փաստ է այնքանով, որ ԵԱՀԿ դիտորդներն անկողմնակալ էին եւ նրանց առաքելությունը բազմամարդ էր: Ինչ վերաբերում է ԱՊՀ դիտորդների եզրակացությանը, ապա, ըստ Աշոտ Սարգսյանի, ԱՊՀ 26 դիտորդից բաղկացած առաքելության եզրակացությունը համեմատելի չէ ԵԱՀԿ 200 դիտորդների տված գնահատականին:

Այնուհետեւ հաջորդաբար Տիգրան Մուկուչյանը եւ Աշոտ Սարգսյանը հարց ու պատասխանի միջոցով փորձում էին պարզել, թե Ընտրական օրենսգրքում առկա «ընտրության արդյունք» եւ «քվեարկության արդյունք» հասկացություններն ինչով են տարբերվում: Ապա կողմերն անդրադարձան քննարկություն հասկացությանը, եւ արդյոք իր կարծիքն արտահայտելու սահմանադրական նորմի խախտում չէ՞, երբ պահանջներ են ներկայացվում ոչ պետական լրատվամիջոցներին:

Տիգրան Մուկուչյանի այն դիտարկմանը, որ մասնավոր մամուլը կարող է արտահայտել իր կարծիքը, Աշոտ Սարգսյանը համաձայնեց վերապահումով, եթե հակասություն չլինի Ընտրական օրենսգրքի հետ:

Մի որոշ ժամանակ կողմերը ծախսեցին նաեւ պարզելու համար, թե ով է համարվում պետական մարմնի աշխատակից, արդյոք պատգամավորը, նախարարը քաղաքական պաշտոններ չե՞ն եւ այլն: Այս հարցի քննարկման ժամանակ Աշոտ Սարգսյանը, հավանաբար կարեւորելով իր սկզբունքային լինելը, նշեց, որ հենց սկզբունքորեն չի ծանոթանում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքին, այն համարելով հակասահմանադրական:

Կողմերն անդրադարձան նաեւ ՁԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանման մոնիտորինգի արդյունքներին:

Տիգրան Մուկուչյանին հետաքրքրում էր, թե որքանով կարող է արժանահավաս լինել շահագրգիռ անձի անցկացրած մոնիտորինգի արդյունքը, եթե ոչ ԵԱՀԿ-ինն է, ոչ «Ընտրությունը փոնն է» կազմակերպությանը: Աշոտ Սարգսյանը պատասխանեց, որ թեեւ իրենք ունեն իրենց սեփական դիտարկումները, դարձեալ պետք է լիներ մեկը, ըստ Աշոտ Սարգսյանի, պետք չէ վստահ լինել, որ մյուս երկուսը եղել են վստահված անձիք:

Քիչ էլ խոսելով կնիքների թաց լինելու եւ նախկինում դրանց չորացվելու մասին, պատասխանող կողմն ավարտեց իր հարցերը: Հարցեր սկսեցին տալ Սահմանադրական դատարանի անդամները, ընդհանուր առմամբ ճշգրտող:

Երեկ դատարանը բավարարեց երկու միջնորդություն, համաձայն որոնց դատարան կհրավիրվի ԿԸՀ նախագահ Արսակ Սահրադյանը եւ դատախազությանը կպարտավորեցվի եռօրյա ժամկետում պարզել, թե Ստեփան Դեմիրճյանի վստահված անձանց նշած 32 տեղամասերի ամփոփիչ արձանագրությունների տվյալները համապատասխանո՞ւմ են արդյոք ԿԸՀ ունեցած տվյալների հետ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



«Կենտրոն» հեռուստաընկերությունն ունի նոր տեր եւ տնօրեն

Փոխվել է «Կենտրոն» հեռուստաընկերության ղեկավար կազմը: Հեռուստաընկերության բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը, որ հաճախականությունների մրցույթով անցել էր «Շարմ» ընկերությանը, գնել է գործարար, ԱԺ պատգամավոր Գուրգեն Արսենյանը: Գլխավոր տնօրեն է դարձել Արթուր Պետրոսյանը, ֆինանսական տնօրեն՝ Հայկ Գրիգորյանը:

Հեռուստատեսային տնօրենի պաշտոնը սանձնել է լրագրող, «Ընտանեկան լոտո» հեռուստախաղարկությունից հայտնի Հակոբ Ռուբինյանը: Վերջինիս հետ հեռախոսազրույցում փորձեցինք պարզել, թե այս փոփոխություններն ինչպես կազդեն եթերի վրա:

«Փոփոխություններ եղածի մեջ չեն լինի: Նախատեսում ենք, պարզապես, ընդլայնել եթերի ծավալները», ասաց պրն Ռուբինյանը:

Այս պահին «Կենտրոնն» ունի երեք հեղինակային հաղորդում՝ «Այցեքարտը», «Տեսանկյունը», «Փողոցը», եւ երկուսը, որ ժամանակավորապես դադարեցված են եղել, այժմ վերականգնվելու են: Լուրերի թողարկումներն էլ, հեռուստաընկերության եթերի պատասխանատուի հավաստմամբ, նախատեսվում է դարձնել առավել հաճախակի՝ տեխնիկական խնդիրների լուծման դեպքում:

Լ. Գ.

Լրագրողների հանդիպում Արտաշատում

Հայաստանում գործող «ProMedia» պրոֆեսիոնալ մամուլի ծրագրի շրջանակով օրերս Արտաշատում կայացավ ամերիկացի եւ արտաշատցի լրագրողների հանդիպումը, որի նպատակն էր լրագրության ասպարեզ ներմուծել կառուցվածքային նոր բնույթի տարրեր:

Հանդիպմանը ներկա էին «Արտաշատ» եւ «Նավաստադ» թերթերի խմբագիր Մարգարիտա Հովհաննիսյանը, թղթակիցներ Ն. Բեգլարյանը, Զ. Դավթյանը եւ այլք, «Արարատ» թերթի լրագրողները, «Աննա» հեռուստակենտրոնի աշխատակիցը եւ մարզպետի մամլո քարտուղար Ն. Ոսկանյանը:

ՁԼՄ-ների հարցերով խորհրդատու Պիտեր Այկսադոնը չորսժամյա դասախոսության ընթացքում լրագրողներին ծանոթացրեց ամերիկյան մամուլում գործող «օրենքներին»: Այնուհետեւ մասնագիտական քարտերի միջոցով ակտիվ քննարկումներ եւ փորձի փոխանակումներ տեղի ունեցան հայ եւ ամերիկացի լրագրողների միջեւ:

Լրագրողները հույս հայտնեցին, որ նմանատիպ հանդիպումները շարունակական բնույթ կկրեն:

ԲՐԻՍՏԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Արտաշատ

ԵՐԳՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Վեհամոր ավետարանի օրհնությամբ

Այսօր տեղի կունենա ՀՀ նախագահի երդման արարողությունը, որի ժամանակ նա սանձալու է հայոց ամենահին ձեռագիր սրբության՝ Վեհամոր ավետարանի օրհնությունը: 1975 թ. մայրանը Մատենադարանին է նվիրել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն: Մայրանի գլխավոր հիշատակարանը չի պահպանվել, հետեւաբար չգիտենք գրչի եւ պատվիրատուի անունները, մայրանի ստեղծման թվականը: Սակայն հնագրագիտական եւ ձեռագրագիտական քննությունը հաստատում է, որ մայրանը ստեղծվել է վաղ միջնադարում, առնվազն 7-րդ դարում: Ձեռագրական այս հազվագյուտ նմուշը հնագույն ամբողջական հայերեն մայրանն է, որը հարյուրամյակներ շարունակ պահպանվել եւ մեր օրերն է հասել Արցախի Մեծ Բանանց գյուղում: (Հայտնաբերել է Վահան եպիսկոպոսը եւ նվիրել Վազգեն Ա կաթողիկոսին՝ ի հիշատակ նրա մոր, այդ պատճառով էլ մայրանը կոչվում է Վեհամոր ավետարան):

Ձեռագրում պահպանվել են հետագայի հիշատակարաններ: Դրանցից մեկը վկայում է 1511 թ. կատարված նորոգման մասին: Մայրանը նորոգվել է նաեւ 1625 թ., «ձեռամբ Շամախեցի Յովհաննես երիցու», եւ ուշագրավ է, որ այս հիշատակարանում անվանվում է «ծեր»: Նշվում է, որ այն Բանանցում էր՝ «Ծեր Աւետարանիս Պանանց»: Այսինքն՝ գիրքը հայտնի էր որպես Բանանցի Ծեր ավետարան: Այսօր մագաղաթյա սրբությունը հնագույնի իրավունքով ՀՀ նախագահի երդման արարողությանն իր ներկայությամբ օրհնում է ոչ միայն նախագահին, այլեւ մեզ բոլորիս:

Ա. Ա.

Լեւոն Չախմախչյան. «Հայաստանում սիրում են Ռուսաստանը եւ չեն թաքցնում»

ՀՀ նախագահ վերընտրված Ռոբերտ Քոչարյանի պաշտոնակալության արարողության առթիվ երեկ Երեւան ժամանած ՌԴ պատվիրակության կազմում է Ռուսաստանի աշխատավորների միությունների կուսակցության (ՌԱԻԿ) նախագահ Լեւոն Չախմախչյանը, որը «Իզվեստիային» տված հարցազրույցում մասնավորապես պարզաբանել է ՀՀ նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանի հաղթանակի հանդեպ նախօրոք իր արտահայտած վստահության պատճառները:

Չախմախչյանի խոսքերով, իր կանխատեսումը հիմնված է եղել Հայաստանի ներկա իրողությունների վրա: Վերջին 5 տարում իրավիճակը լավացել է: 1998 թ. երկրում տիրում էր զանգվածային գործազրկություն, արդյունաբերությունը հոգեվարք էր ապրում: 1988 թվականի երկրաշարժի գոտում տասնյակ հազարավոր մարդիկ ծվարել էին ժամանակավոր կացարաններում:

«Նախագահ ընտրվելով նման պայմաններում՝ Քոչարյանը մարդկանց մեջ կարողացավ վերականգնել հավատն ու հույսը», նշում է Չախմախչյանը: Նախագահն սկսեց զբաղվել կոնկրետ ծրագրերով, տնտեսական հաստատուն վերափոխումներ մեր երկրում: Հինգ տարում ՀՀ ներքին համախառն արդյունքն ավելացավ 1,5 անգամ, ինչը ենթադրում է տնտեսական կայուն աճ տարեկան 10 տոկոսով:

Սերտացան Հայաստանի եւ սփյուռքի հարաբերությունները, զգալիորեն ամրապնդվեցին ՀՀ դիրքերը միջազգային ասպարեզում ակտիվ եւ ճկուն քաղաքականության շնորհիվ:

Իհարկե, մնում են զգալի թվով չլուծված խնդիրներ: Նման պայմաններում հանրապետության ղեկավարության փոփոխումը բացասաբար կանդրադառնար վերածնման գործընթացի վրա: Մարդկանց մեծ մասը հասկացավ, որ նախագահին պետք է տրվի գործն ավարտին հասցնելու հնարավորություն: Բացի դրանից, Չախմախչյանի կարծիքով, ընդդիմությունն այդպես էլ չներկայացրեց միչ թե շատ հասկանալի ծրագիր:

Իրաքի պատերազմի եւ դրա հնարավոր հետեւանքների կապակցությամբ Չախմախչյանը նշում է, որ ներկա պայմաններում Հայաստանի եւ Ռուսաստանի քաղաքական գերակայությունները զուգադիպում են: Երկու երկրներն էլ ուզում են պահպանել տասնամյակներով ստեղծված աշխարհակարգը, որի փլուզումը կվտանգեր առաջին հերթին փոքր երկրների անվտանգությունը:

«Հայաստանը հետխորհրդային սակավաթիվ պետություններից է, որտեղ Ռուսաստանի հանդեպ ոչ միայն առկա է լավ վերաբերմունք, այլեւ ընդգծվում է այդ համակրանքը»: ՌԱԻԿ-ն իր ավանդն ունի ռուս-հայկական բարեկամության մեջ. մասնավորապես Երեւանում մասնակցել է նախագահ Քոչարյանին Սվյատոսլավ Ֆյոդորովի անվան մրցանակի (որի հիմնադիրներից է) եւ «Լուսավորության ջատագովին: Ա. Ս. Պուշկինի ծննդյան 200-ամյակի առթիվ» մեդալի հանձնման արարողությանը:

Պ. Ք.

Միջավայր

Աղձավանջի զարուն չորֆոտանիների համար

Միայն մարտին 537 շուն է ոչնչացվել

Տանը շուն կամ այլ կենդանի պահելը շատերի համար կենսական բաղադրիչ է դարձել: Ինչո՞ւ է մարդը փնտրում նրանց ընկերակցությունը: Հոգեբաններն ասում են՝ մենակությունից կամ երբ իր նմանի հասարակության մեջ մարդը չի գտնում այն, ինչ անհրաժեշտ է համարում այդ ոչ ասուն արարածները՝ հավատարմություն, սեր, դրական լիցքեր: Երեւանի այգիներում հաճախ կարելի է հանդիպել խնամված, ինքնագոհ արտահայտությամբ ազնվացեղ շների, որոնց գբոսանքի են հանել տերերը: Եվ ավելի ու ավելի հաճախ՝ աղբակույտերը էլփորող, կեղտոտ ու կասկածելի տեսքով նրանց ոժբախտ ազգակիցներին: Մենք ինքներս ենք ստեղծել այդ 2 բեւեռները նաեւ շների հասարակության մեջ:

Օրերը տխանալու հետ վրա հասան թափառողների սեւ օրերը: Եվ ոչ միայն նրանց: Մեր իրականության մեջ երկչոտությամբ, սակայն միանգամայն որոշակի ուրվագծվում է խուլ դժգոհություն այդ կենդանիների խնդիրը լուծելու վայրենի ավանդույթի դեմ: Նույնիսկ թափառող կենդանիների դեմ պայքարի առաքելությամբ հատուկ կառույց է ստեղծվել՝ «Դամի-արգ» ՍՊԸ: Ընկերության նախագահ Համլետ Աղամյանից տեղեկացանք, որ միայն մարտին 538 շուն են ոչնչացրել: Այդ կենդանիների կյանքն արժե ընդամենը 170 դրամ, այդքան են վճարում ծառայության աշխատողին՝ իբրեւ աղացույց ներկայացված սպանված շան պոչի դիմաց: Ամեն շաբաթ տասնյակ, հարյուրավոր շներ պարզապես գնդահակարվում են:

Գարնան գալուց ի վեր «Ազգի» խմբագրությունը տասնյակ հեռախոսազանգեր է ստանում, որոնց հեղինակները զայրույթ են արտահայտում այս կենդանիների նկատմամբ ցուցաբերվող անմարդկային վերաբերմունքի դեմ: Վերջին ժամանակներս մի հետաքրքրական իրողություն էլ է արձանագրվում: Անտուն շներից շատերը դարձել են բնակելի բազմահարկերի, առեւտրային կրպակների, նույնիսկ հիմնարկ-ձեռնարկությունների բակապահները, որոնց սիրում են ու որոնց մասին հոգում են շենքերի բնակիչներն ու այդ կազմակերպությունների աշխատողները:

Գարնան սկզբին մեկնարկած հատվածներից մեկում գտնվող իրենց շենքի մուտք եւ կրակել շան վրա, արբնացնելով ու սարսափահար անելով բնակիչներին: Արդյոք դրանք իսկապե՞ս վայրենացած ու կատաղի այն շներն են, որոնք վտանգավոր են մարդկանց կողքին ապրելու համար: Արդյոք կազմակերպության անդամները, ոչնչացնելով նրանց, պարզապես ոլանային ցուցանիշ չե՞ն ապահովել:

Ընկերության աշխատողները հավաստիացնում են, որ իրենք գործում են ըստ ահազանգերի, որ բնակիչը դիմավորում է իրենց ու ուղեկցում շների թափառականները: Վերը նկարագրված դեպքում հստակ ոչ մեկը ոչ դիմավորել, ոչ էլ ահազանգել է: Եվ մի փիչ էլ անհավատալի է, որ գիշերվա կեսին մարդիկ, ընդհատելով քունը՝ նման էնտուզիազմ են դրսեւորում, առավել եւս եթե մատնացույց են անում բակապահ շներին: Այս կենդանիները հրաշալի տարբերում են օտարներին «իրենց տարածքի» մարդկանցից եւ կասկածելիներին մոտ չեն թողնում: Բնակիչներից մեկը պատմում է, որ իրենց շենքի պահակ շունը մի օր անսպասելի անհետացել է, իսկ կարճ ժամանակ անց շենքում գողություն է կատարվել: Այս տեսանկյունից, նրանք իսկապես վտանգ են ներկայացնում գողերի ու հանցագործների համար: Խորհրդային տարիներին սանիտարահակահամաճարակային ծառայության աշխատողները շենքից շենք անցնելով՝ կրծողներին ոչնչացնելու դեղամիջոցներ էին տեղադրում շենքերի տարբեր անկյուններում: Վաղուց ի վեր այդ կարգի միջոցառում իրականացնողների ոչ ոք չի տեսնում: Եթե անտուն, անտեր այս շները չլինեին, որոնց համար կրծողները հիմնական կերակուր են դարձել, առնետները հիմա մեզ կերել էին:

Իհարկե, հատկապես խուլ ու մութ փողոցներում հայտնված մարդու համար վտանգավոր են վայրենացած, սովահար շները, որոնք հիվանդությունների տարածման աղբյուր են, եւ բնակիչների մի սվար զանգված նույնպես պիտի որ բողոքի իրողության դեմ: Բայց այդ կենդանիները մեղավոր չեն, որ այդպիսին են դարձել: Եվ ոչնչացնելու ճանապարհով գլխացավից ազատվելու սկզբունքին հավատարիմ մնալով՝ մենք հստակորեն ընդգծում ենք, որ մեր մեջ արթուն են նույն այդ կենդանիների վայրի բնազդները: Մենք ինքներս ենք նրանց այդպիսին դարձրել:

Որպես հակազդեցություն մշտապես բերվում է գումարներ չունենալու, աղքատ երկիր լինելու փաստարկը: Բայց ֆինանսներ պահանջող, անլուծելի թվացող բանի՞ պրոբլեմ է բացառապես մեր միջոցներով լուծվել: Կա՞ արդյոք որեւէ ասպարեզ, որի համար չենք դիմել միջազգային կազմակերպության ու օգնություն ակնկալել: Կենդանիների պաշտպանության համաշխարհային կոմիտե գոյություն ունի: Հայաստանի՝ 2000-ի սահմանը վաղուց անցած հասարակական կազմակերպություններից քանիսի՞ն է հետաքրքրում անտուն շների խնդիրը, կամ կա՞ որեւէ կառույց, որեւէ մեկի մտքով անցե՞լ է դիմել միջազգային կազմակերպություններին: «Դամի-արգ» ՍՊԸ-ի նախագահը փորձում է հավատացնել, որ ինքը նոր-նոր մտադրվել է դիմել Գերմանիայի ու Ֆրանսիայի՝ կենդանիների պաշտպան միություններին, որովհետեւ «շներն իսկապես մեղք են, իսկ այսօր այլ ելք չկա»:

Ուրիշ երկրներում այդ ելքը վաղուց են գտել: Իսկ մենք այս գծով էլ շարունակում ենք մնալ ասիացի: Ռուսաստանում, օրինակ, գործում են հատուկ բուծարաններ, որոնց միջոցով, նաեւ այս կենդանիների տարերային բազմացումն է կարգավորվում: Իսկապես վտանգավոր կենդանիներին ոչնչացնում են, միայն թե ոչ վայրագ մեթոդներով: Առանձնացվում են նաեւ այն տեսակները, որոնց կարելի է օգտագործել որսորդական, ռազմական, բժշկական նպատակներով, հանձնել գազանանոցին: Հաշվարկվել է, որ նման տնտեսությունների ստեղծումն անհամեմատ էժան է, քան ասենք վառոդի, տրանսպորտի, բենզինի ու աշխատավարձերի մեծ ծախսերով՝ շների վերացմանը կոչված կազմակերպությունների: Սոցիալական սուր խնդիրների խորքի վրա թափառող շների համար միջոցներ փնտրելը շատերին անիմաստ զբաղմունք է թվում: Բայց, փառք Աստծո, մեծանում է նաեւ հակառակը պնդող մարդկանց թիվը: Ժամանակն է շների սպանդը դադարեցնելու առաջին քայլերն անել, որ մղձավանջ է դարձել շատ ու շատ մարդկանց համար:

Այս շաբաթ դարձյալ 100 շուն է ոչնչացվել:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ



«Օրրան». Հանգրվան ոչ միայն երեխաների համար

«Սա այն տեղն է, որտեղ մենք ջերմություն, խնամք, հուսալիություն ենք զգում»: Այսպես են բնորոշում «Օրրան» հաճախող երեխաներն իրենց հանգրվանը, որը հիմնվել է 2000 թ. Ռաֆֆի եւ Արմինե Հովհաննիսյանների ջանքերով: Սկզբնական շրջանում 16 երեխա եւ նույնքան էլ մեծահասակներ էին այստեղ հաճախում: Երկու տարվա ընթացքում երեխաների թիվը հասնում է 50-ի, իսկ մեծերինը՝ 30-ի: Ծրագիրը նախատեսված է սոցիալապես անապահով երեխաների համար: Մշակույթի պատասխանատու Սուսաննա Մանուկյանը պատմեց, որ սկզբում կազմակերպության հիմնադիրները ցանկանում էին մանկատուն ստեղծել, բայց հետո Հովհաննիսյան ամուսինները որոշեցին, որ երեխաները պետք է տանն ապրեն եւ ծնողական ջերմություն ստանան: Կազմակերպությունն օգնում է ծնողներին, թեթեւացնում նրանց հոգսերը: Այստեղ երեխաները սնունդ են ստանում, հագուստ, դպրոցական պարագաներ: Ուսումնական տարվա առթիվ յուրաքանչյուր երեխա պայուսակ եւ նույնիսկ ծաղկեփունջ է ստանում: Կազմակերպության տնօրենությունը հետեւում է, որ երեխաներն անպայման դպրոց հաճախեն, կրթություն ստանան: Դասերից հետո աշակերտները գալիս են «Օրրան», ճաշում, եթե առողջությունից բողոքներ են ունենում, ապա բժշկական քննություն են անցնում եւ անհրաժեշտության դեպքում բժշկական օգնություն ստանում: Այնուհետեւ հոգեբանները վարժություններ են անցկացնում: Եվ միայն դրանից հետո սկսում են պատրաստել տնային աշխատանքները, ինչում իրենց օգնում է մանկավարժը:

Առայժմ կազմակերպությունը մեկ մանկավարժ ունի, բայց շատ կամավորներ են զբաղվում երեխաների հետ: Հիմնականում դրանք Բրյուսովի անվան համալսարանի ուսանողներ են: «Օրրանի» գործունեության մասին լուրն արագ տարածվեց: Այստեղ հաճախ կամավորականներ են գալիս արտասահմանից եւ օգնում ինչ-ինչ հարցերում: Կամավորական հիմունքներով իրենց ծառայություններն են առաջարկում տեղացիները՝ համակարգիչ, անգլերեն, մակրամե եւ այլն ուսուցանելու նպատակով: Երեխաների օրն անցնում է ուրախ եւ բովանդակալից: Ուսանող-կամավորականները բացի դասեր պատրաստելու օգնությունից, տարբեր զվարճալի մշակութային միջոցառումներ են կազմակերպում: Երեխաները եղել են շատ թատրոններում, պուրակներում: 4 անգամ «Ջրաշխարհում» են եղել: Մշակույթի գործիչներն են երբեմն այցելում «Օրրան»: Վերջերս էդգար Գյանջությանն էր եկել, իր նոր ծայնագրություններից էր նվիրել, երեխաներն էլ նրա գրած երգերից կատարեցին: Ամառային արձակուրդները երեխաների մի մասն անց է կացնում «Պատանեկան նվաճումներ» կազմակերպության հանգստյան տանը, իսկ մյուսներին ընդունում է Ֆույր Արուսյակը «Տիրամայր» ճամբարում:

«Օրրանը» հանգրվան է եւ միայնակ մեծահասակների համար: Սոցիալ-տնտեսական վիճակից դրդված նրանց զավակներից շատերը լքել են հայրենիքը՝ թողնելով ծնողներին առանց խնամքի: «Օրրան» հաճախող մեծերի եւ երեխաների միջեւ օրգանական կապ է հաստատվել: Մեծերը նրանց մեջ իրենց թոռներին են տեսնում, երեխաներն էլ նրանցից ջերմություն են ստանում: Կազմակերպության տնօրենությունն անտարբեր չէ իր սաների նկատմամբ նաեւ այն ժամանակ, երբ նրանք ավարտում են դպրոցը: Շրջանավարտներից մեկը ցանկացավ դիմահարդար դառնալ: «Օրրանի» տնօրենության միջնորդությամբ անվճար հիմունքներով նրան ընդունեցին հատուկ կուրսերի: Բացի հանապազօրյա հացի հոգսից «Օրրանը» նաեւ նպաստում է իր խնամքի ներքո գտնվողների հոգեւոր հարստացմանը:

ԱՌԴԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ԿԱՆԱՉ ԴԵՂԱՏՈՒՆ

Եզան լեզու կամ ջղախոտ

Ջղախոտը պատկանում է ծաղկավոր բույսերի ջղախոտազգիների (Plantaginaceae) ընտանիքին: Ցեղի գիտական անվանումն է Plantago L. (եզան լեզու, ջղախոտ): Տարածված է ամբողջ աշխարհում, հաշվում են մոտ 250 տեսակ, Հայաստանում՝ 10 տեսակ:

Ըստ գրականության տվյալների հյուսիսամերիկյան հնդկացիները ջղախոտը անվանում են «սպիտակ հետք», քանի որ դրա սերմերը, եվրոպացի վերաբնակիչների ճտավոր ցեխոտ կոշիկների հետ, կտրել անցել են օվկիանոսը եւ հասել Ամերիկա: Ամենուրեք, որտեղ դիմել են եկվորների ոտքերը, աճել է այդ անպահանջկոտ բույսը: Լատիներեն անվանումը ծագել է Planta բառից, որը նշանակում է «ոտնաթաթ»: Այն վայրերում, որտեղ տարածված է, աճում է ամենուրեք՝ մարգագետիններում, անտառներում, ճանապարհների եզրերին, ցանքերում, քարքարոտ տեղերում, բնակատեղիների մոտ, աղբոտ վայրերում, պուրակներում, զբոսայգիներում, նաեւ կախված տեսակից՝ խոնավ տեղերում, առուների ափերին եւ այլն: Աշնանային անձրեւների ժամանակ ցեխի հետ ջղախոտի սերմերը կպչում են անցորդների կոշիկներին, մեքենաների անիվներին եւ շրջում են աշխարհով մեկ:



Հայաստանում աճող տեսակներից նշենք եզան լեզու մեծ եւ եզան լեզու նշտարատերեւը, որոնք տարածված են ստորին լեռնային գոտուց մինչեւ բարձր լեռնային գոտին. բազմամյա արմատամերձ տերեւներով վարդակավոր բույսեր են, տերեւներն ամբողջաեզր են: Կախված տեսակից տերեւները լինում են ձվաձեւ (եզան լեզու մեծ), նշտարաձեւ (եզան լեզու նշտարատերեւ) եւ այլն: Տերեւներին բնորոշ է աղեղնաձեւ ջղավորություն, երբ տերեւը կտրում են, ջղերը ձգվում են բարակ եւ ամուր թելերով: Ջղախոտը ծաղկման ժամանակ առաջացնում է մանր, անշուք, թաղանթային ծաղիկներ, որոնք ծաղկակիր սլաքի վրա կազմում են խիտ հասկ ծաղկաբույլ: Սերմերը մանր են, ունեն գորշ գույն, յուրաքանչյուր մեկ բույսն առաջացնում է մի քանի հազար սերմեր, այդ պատճառով էլ տեսակն արագորեն տարածվում է: 1000 հատ սերմերը (եզան լեզու մեծ) կշռում են 0,14-0,25 գ:

Ջղախոտը վաղուց ի վեր հանրահայտ ժողովրդական դեղամիջոց է: Օգտագործվում է ինչպես գիտական, այնպես էլ ժողովրդական բժշկության մեջ: Եզան լեզու մեծ տեսակի տերեւներից ստացված թուրմը բժշկության մեջ օգտագործում են հազի, իսկ հյութը՝ սաստմոսի, աղիների բորբոքումների դեմ: Որոշ տեղերում կազմակերպված են եզան լեզվի արդյունաբերական մշակովի տարածություններ եզան լեզվի տերեւներից թարմ հյութ ստանալու համար: Ըստ գրականության տվյալների, տերեւները պարունակում են դաբաղանյութեր, վիտամիններ C, K, A, շաքարներ, ալկալոիդներ եւ այլ նյութեր: Սերմերը պարունակում են ճարպանյութեր, լորձանյութ եւ այլն:

Ջղախոտը որպես բուժական միջոց արաբ եւ պարսիկ բժիշկները օգտագործել են դեռեւս X դարում եւ շատ են գնահատել: Հնագույն հունական եւ հռոմեական բժշկությունը երաշխավորել է ջղախոտի սերմերն օգտագործել դիզենտերիա հիվանդության դեպքում: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են թարմ տերեւները վնասվածքների, վերքերի բուժման համար, որը հայտնի է եղել նաեւ Հայաստանում:

ԱՎԱՆԴ ՇԱՐՈՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Կատաղի մարտեր Բաղդադի կենտրոնում

Հեռուստակենտրոնը դադարեցրել է հաղորդումները

Երեկ առավոտյան Բաղդադում կատաղի փոխհրաձգություն է ծավալվել իրաքցիների եւ ամերիկյան զորքերի միջեւ, որոնք փորձում էին տիրանալ Տիգրիս գետի երկու գլխավոր կամուրջներին: Ոոյթերի եւ Ֆրանսպրեսի թղթակիցները հաղորդում են, որ ի վերջո ամերիկյան մի քանի տանկեր կարողացել են հասնել մինչեւ գետի արեւելյան ափ: Կամուրջներ մոտ գործի են դրվել խոշոր տրամաչափի գնդացիրներ, առա՝ ինքնաշեն 2 լրագրող:

Ըստ Ֆրանսպրեսի, Բաղդադի երկնքում առաջին անգամ հայտնվել են ամերիկյան «Ապաչ» ուղղաթիռներ, որոնք քաղաքի արեւելքում գնդակոծել են Իրաքի հանրապետական գվարդիայի դիրքերը: ԱՄՆ ծովային հետեւակի մարտիկները երեկ Բաղդադի հարավարեւելյան արվարձանում վերահսկողության տակ են առել քաղաքի պահեստային օդանավակայանը, որը կենտրոնից ընդամենը 5 կմ հեռավորության վրա է: Ամերիկյան զինվորական հրամանատարությունը նշել է, որ օդանավակայանը որոշ հենակետ կօգտագործվի Բաղդադի ճակատամարտում: Հակաիրաքյան կոալիցիայի ուժերը քաղաքի գլխավոր՝ միջազգային օդանավակայանին տիրացել էին ավելի վաղ:

ԱՄՆ կենտրոնական հրամանատարության խոսնակը երեկ Քաթարում հայտարարել է, որ ճշգրիտ գործողության 4 ռումբ է նետվել Բաղդադի շենքերից մեկի վրա, որտեղ, ըստ հետախուզական տվյալների, եղել են Սադդամ Հուսեյնը, նրա 2 որդիները եւ իրաքցի մի խումբ բարձրաստիճան ղեկավարներ: Ռմբակոծությունը տեղի է ունեցել Բաղդադի Ալ Մանսուր թաղամասում:

Երեկ՝ կեսօրից հիշ առաջ Իրաքի հեռուստատեսությունը դադարեցրել է հեռարձակումը: Դրանից առաջ չէր հեռարձակվել ավանդական ռազմական լրատվությունը, հաղորդվել էին միայն հայրենասիրական երգեր եւ Սադդամ Հուսեյնի հին ելույթները: Կեսօրից հետո ընդհատվել են նաեւ Իրաքի ռադիոյի հաղորդումները:

Նախագահ Սադդամ Հուսեյնի գտնվելու վայրի մասին լրատվական գործակալությունները որեւէ բան չեն հաղորդել: Միջազգային լրատվամիջոցներն ամբողջ օրը ենթադրություններ էին անում Սադդամ Հուսեյնի զոհվելու մասին: Մինչեւ երեկո այդպես էլ չհաստատվեցին այդ ենթադրությունները:

Պ. Ք.

Բուշը եւ Բլերը խնարկել են Իրաքի եւ Օլսթերի հարցերը

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն ու պետքարտուղար Քոլին Փաուելը երեկ եւ անցյալ օրը Բելֆաստում Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի եւ արտգործնախարար Ջեկ Սթրոուի հետ քննարկել են Իրաքի, Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային Իռլանդիայի հարցերը: Բրիտանական պաշտոնական աղբյուրներում վկայակոչելով, Ֆրանսպրեսը հաղորդում է, որ բանակցություններում արծարծվել են Իրաքի հետպատերազմյան զարգացումներին առնչվող խնդիրներ: Մասնավորապես ընդգծվել է իրաքյան ադագա կառավարության կազմավորման կարեւորությունը:

Պետքարտուղար Քոլին Փաուելի խոսքերով, Իրաքում ՄԱԿ-ի խաղաղարար դերի առնչությամբ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի տարաձայնությունները «այնքան խորը չեն, որքան ներկայացվում են լրատվամիջոցներում»: Բանակցություններում դիրքորոշումների հետագա մերձեցման փորձեր են արվել: Ավելի վաղ՝ երկուշաբթի օրը, Քոլին Փաուելը հայտարարել էր, թե անգլո-ամերիկյան կոալիցիան մեծ զոհողություններ է արել, ուստի պետք է «գերիշխող դեր խաղա իրաքցիների ընտրելիք ներկայացուցչական կառավարության մեջ»: Միաժամանակ նա դիտարկեց, թե Ազգային կղզիներում 2 շաբաթ ավանգիտորեն ավելացրել էր

Մշակույթ

Ողջ երկրով մեկ

Ապրիլի 8-ին Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ «Ազգային գրադարանային շաբաթվա» ցուցահանդեսի բացման արարողությունը: Ողջույնի խոսքով հանդես եկան գրադարանի տնօրեն Դ. Սարգսյանը, Հայկական գրադարանային միության նախագահ Ն. Հայրապետյանը: Ելույթ ունեցան նաեւ Մ. արք. Աճեմյանը, Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպան Ջ. Օրդուեյը: Ինչպես նշեց Ն. Հայրապետյանը, սա երկրորդ անգամն է, որ նշվում է Ազգային գրադարանային շաբաթը: Նման միջոցառումներն օգնում են գրադարանների եւ իշխանության մարմինների հետ հասարակական երկխոսության հաջողմանը:

Ազգային գրադարանային շաբաթվա ծրագրերին միացել են հանրապետության բոլոր խոշոր գրադարանները, 9 համալսարանական, 10 մարզային, տասնյակ կենտրոնական, քաղաքային, մանկական, դպրոցական եւ այլ գրադարաններ: Գրադարանները ԱԳՇ միասնական ծրագրին ներկայացրել են ավելի քան 100 տարբեր բնույթի միջոցառում՝ ցուցահանդես, ցերեկույթ, հանդիպում, ճնարկում, շնորհանդես, կոնֆերանս, սեմինար եւ այլն: Ապրիլի 8-14-ը միջոցառումներ տեղի կունենան Խնկո Ապոր անվան հանրապետական մանկական, Երեւանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարաններում: Ուշագրավ ծրագիր են ներկայացրել Լոռու, Սյունիքի, Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Կոտայքի եւ այլ մարզային գրադարանները: Շաբաթը նշվելու է նաեւ Էջմիածնում, Սպիտակում, Աթարանում, Սեւանում եւ այլ բնակավայրերում: Միության վարչությունը ծրագրել է ապրիլի 12-ին այցելել մարզային գրադարաններ, մասնակցել մարզային եւ քաղաքային գրադարանների ծրագրերին եւ միասին տոնել շաբաթը:

Միությունն առաջարկեց այսուհետեւ հոկտեմբերի 7-ը՝ «Հայկական գրադարանային միության» հիմնադրման օրը սահմանել իբրեւ ՀՀ գրադարանավարի մասնագիտական տոն: Առաջարկն ուղարկվեց ՀՀ կառավարության հասցեով:

ԳՈՀԱՐ ՁՈՒՐԱԿՅԱՆ

Ազգային գրադարանային շաբաթ

Գրադարանը մշտական բարեկամներ ունի

«Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակներում երեկ առաջին միջոցառումը կազմակերպվեց նաեւ Ավետիք Իսահակյանի անվան գրադարանում: Այս անգամ գրադարանի հյուրերն էին գրասեր հասարակայնությանը ծանոթ մարդիկ՝ Լեւոն Միրիջանյանը, Ալբերտ Հովհաննիսյանը, Լյուդվիգ Դուրյանը, Լիպարիտ Սարգսյանը, Համլետ Կարճիկյանը, Ֆրունզիկ Կիրակոսյանը:

- 1975 թ. սովորել եմ Երեւանի թիվ 29 միջնակարգ դպրոցում, որը ժամանակին տեղավորված էր այս շենքում,- ասաց բանաստեղծ Լյուդվիգ Դուրյանը:- Եվ հիմա ես այստեղ եմ գալիս ոչ միայն որպես այս գրադարանի լավ բարեկամ, այլեւ այս շենքում սովորած մարդ: Հարազատ տուն եմ մտնում:

Ի տարբերություն մայրաքաղաքի շատ ու շատ գրադարանների, Ավ. Իսահակյանի անվան գրադարանը մշտական բարեկամների լայն շրջանակ ունի, որոնք մինչ օրս էլ հավատարիմ են իրենց հարազատ, ջերմ օջախին: Դեռեւս 1935 թ. հիմնադրված Երեւանի առաջին մասսայական գրադարանի այսօրվա տնօրեն Հասմիկ Կարապետյանը հպարտությամբ է ասում, որ ընթերցողների ընտրանին է այստեղ: Եվ պատահական չէ, որ հենց այս գրադարանն իրեն պարտավորված է զգում շաբաթվա շրջանակներում հետաքրքրական միջոցառումներ կազմակերպել:

Ապրիլի 10-ին այստեղ հանդիպման են գալու Ազգային ժողովի պատգամավորներ Ալվարդ Պետրոսյանը, Շավարշ Քոչարյանը եւ Դավիթ Հովհաննեսը: Իսկ հաջորդ օրն այստեղ կլինեն գրադարանի մյուս բարեկամները:

Ս. Գ.

Երվանդ Մանարյան. «Արվեստում մեր չափանիշներով առաջնորդվենք»

Վերջերս լրացավ Երեւանի քաղաքապետարանի «Ագուլիս» տիկնիկային թատրոնի 15-ամյակը: Թատրոնի գեղարվեստական ղեկավար Երվանդ Մանարյանը Երեւանում եւ հանրապետության տարբեր մարզերում թատերական բազմաթիվ օջախներ է ստեղծել. 1957 թ. վերակազմակերպել է Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնը, Գորիսում պետական դրամատիկական թատրոնը, 1959 թ. Շուշիում ակտիվորեն մասնակցել է տիկնիկային թատրոնի հիմնադրմանը, որը ներկայումս կոչվում է իր անվամբ: Գործունեության շրջանակները ծավալվել են նաեւ արտերկրում. 1953 թ. Վիեննայում կազմակերպել է հայկական թատերական օջախ: Ճանաչված արվեստագետի հետ զույգը սկսվեց թատրոնի ներկա գործունեությունից:

- Այժմ ակտիվ ստեղծագործական վիճակում է թատրոնը: Յուրաքանչյուր ուրբաթ, շաբաթ, կիրակի օրերին հանդես ենք գալիս տարբեր ներկայացումներով: Օրերս առաջին անգամ նշվեց տիկնիկային թատրոնի միջազգային տոնը: Մենք բարեգործական հիմունքներով խարբերդի մանկական երեխաների համար ներկայացումներ ցուցադրեցինք:

- Ի՞նչ դժվարությունների հետ եք առնչվում:

- Ամենամեծ դժվարությունը մենակությունն է՝ մենակ ես քո դաշտի հետ, դեմ-դիմաց: Թիկունքում ոչ ոք չկա: Չենք հետաքրքրում նրանց, ովքեր կոչված են օժանդակելու մեզ: Ցավալի է ուշադրության բացակայությունը եւ չգնահատված լինելը, մնացած ամեն դժվարություն տանելի է:



- Արվեստագետի ասելիքը տիկնիկային թատրոնում եւ մեծ բեմում ինչո՞վ է տարբերվում:

- Առանձնահատուկ տարբերություն չկա: Տիկնիկայինում երեխաներ ենք դաստիարակում, իսկ մեծ բեմում մեծ մարդաշատի չափանիշներն են գործում: Մենք առաջնորդվում ենք Ստանիսլավսկու խոսքերով. «Երեխաների համար պետք է խաղալ այնպես, ինչպես մեծերի համար, գուցե թե՝ ավելի լավ»:

- Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքն այսօրվա երիտասարդ արվեստագետի մասին:

- Ճիշտ է, տաղանդը չի պակասել, ստեղծագործական ազատությունը կա, բայց այսօր մեր երիտասարդությունն առնչվում է երկու հիմնական դժվարությունների: Առաջինը հնարավորությունների պակասն է, երկրորդը՝ աշխարհի հետ համաչափ քայլելու մարմաջը, որը, սակայն, շփոթեցնում է. պարզ ընդօրինակումը հակառակ արդյունքն է տալիս: Վատ է, երբ ընդօրինակում ենք: Մեր արվեստի չափանիշներով հարմարվենք, բայց ոչ ընդօրինակենք:

- Ո՞րն է մշավորականի դերը երկրի համար դժվարին ժամանակներում:

- Մշավորականը կուսակցությունից պետք է ընդհանրապես հեռու լինի, որովհետեւ դա ենթադրում է քաղաքականություն: Հատկապես թատրոնի աշխատողը քաղաքականության հետ գործ չպետք է ունենա: Մշավորականը հասարակության մեջ դաստիարակի դեր ստանձնողն է: Նա պետք է օրինակ ծառայի բոլորին եւ շարունակի իր գործն այն ասպարեզում, որի զինվորն է ինքը:

ՆԱՌԱ ԳԱՆԻԵԼՅԱՆ

Գոյան ընդհատակից

Մարտի 15-ից Մոսկվայի հնագիտության թանգարանում (Մոսկվայի պատմության թանգարանի մասնաճյուղը) բացվել է եզակի ցուցահանդես, որը կրում է «Գոյա՝ հոգու տաճարքիվ» խորագիրը, հաղորդում է «Մոսկոու նյուս» շաբաթաթերթը:

Ցուցահանդեսը եզակի է համարվում, որովհետեւ առաջին անգամ Ռուսաստանում արվեստասեր հանրությանն է ներկայացվել իսպանացի մեծ վարպետի 1793-1824 թթ. ստեղծած սեւ ու սպիտակ օֆորտների չորս նկարաշարերը միաժամանակ (ավելի քան 200 թերթ), մի երեւույթ, որը տարիներ առաջ միայն Մյունխենում է տեղի ունեցել:

Հայտնի է, որ Գոյան զբաղվել է հատկապես գրաֆիկայով (գծանկար, օֆորտ, ակվանտինտա), երբ խոր ողբերգություն է ապրել Կառլոս IV-ի ռեակցիոն ուղուց: Նրա նկարների տոնական հնչեղությունն ու լուսավոր նրբերանգները փոխարինվել են մթի ու լույսի սուր հակադրություններով:

Հիշյալ չորս նկարաշարերը վերնագրված են «Կապրիչոս» (80 թերթ)՝ հրատարակված 1799-ին, «Պատերազմի արհավիրքները» (80 թերթ)՝ հրատարակված 1863-ին, «Տավրոմախիա կամ զլատատորս» (40 թերթ)՝ հրատարակված 1816-ին եւ «Դիսպարատես կամ անհեթեթություն» (22 թերթ)՝ հրատարակված 1863-ին: Առաջինը սուր ծրագրային բնույթ է կրում, երրորդը շարժումը դարձնում է ոիթմային լեյտմոտիվ, իսկ երկրորդն ու չորրորդը լի են սահմռկեցուցիչ, գրոտեսկային եւ մղձավանջային կերպարներով, որոնք նկարել է, երբ արդեն խուլ էր եւ համարյա կույր:

Օֆորտների այս ամբողջական շարքը Մոսկվա է բերվել Համբուրգ (Գերմանիա) քաղաքի Կունսթալերիեն Բրինգերհաուս պատկերասրահի (Ռիչարդ Մեյերի անհատական հավաքածու) հետ հատուկ համաձայնության շնորհիվ:

Ըստ հաղորդագրության, Մոսկվայի իշխանություններն այս ցուցահանդեսի համար գեներալ 8 մետր խորության վրա հատուկ տարածք են տրամադրել, որը նման է 18-19-րդ դդ. վարպետի նախասիրած աշխատավայրերին: Ցուցահանդեսի դահլիճներում այցելություններին ուղեկցում է Ռոման Ոյազանցեւի այդ առթիվ գրված երաժշտությունը:

Ցուցահանդեսը, որը բաց է մնալու մինչեւ մայիսի 18-ը, իսպանացի մեծ նկարիչներին նվիրված շարքի մի մասն է կազմում եւ ունենալու է շարունակություն՝ այս անգամ նվիրված Պաբլո Պիկասոյին:

Հ. Ծ.

ՀԱԿԻՐՃ

Քարիզում ապրիլի 24-ին կբացվի Կոմիտասի հուշարձանը

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Քարիզի կենտրոնական Գրան Փալաս թանգարանի մերձակայքում գտնվող Կանադական փողոցում սկսվել են հայազգի մեծանուն երաժշտահան Կոմիտասի բրոնզե հուշարձանի տեղադրման աշխատանքները: Հուշարձանի բացումը տեղի կունենա ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 88-րդ տարելիցի օրը: Քանդակագործ Դավիթ Երեւանցու հեղինակած հուշարձանն ունի 6 մետր բարձրություն, արձանի պատրաստման եւ տեղադրման աշխատանքները արժեցել են 300 հազար եվրո: Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդը ապրիլի 23-24-ին կիրականացնի միջոցառումներ արձանի բացման կապակցությամբ:

Ռուբեն Հախվերդյանը գնում է



Լավագույն տղաներից մեկը՝ Ռուբեն Հախվերդյանը, հեռանում է... Բայց հեռանում է կարճ ժամանակով, միայն մեկ ամսով, եւ գնում է համերգային շրջագայության: Ոչ ավելի: Նախնական պայմանավորվածության համաձայն նա համերգներ է տալու Լոս Անջելեսում եւ Սան Ֆրանցիսկոյում:

- Ճիշտ է, գնում եմ,- գնալուց առաջ ասաց բարեկամս,- բայց իմ գնալու շուրջ պետք չէ աղմուկ բարձրացնել: Ազատ մարդ եմ եւ որտեղ ցանկանամ, որտեղ իմ գործերի պահանջը զգացվի, այնտեղ էլ ելույթ կունենամ:

Ռուբեն Հախվերդյանի երկրպագուներին (հատկապես Լիլիթ անունով աղջկան) շատ է հետաքրքրում, թե երեւանում ե՞րբ է համերգներ տալու:

- Մի քանի ամիս կարելի է սպասել Ռուբեն Հախվերդյանին,- ասաց Ռուբեն Հախվերդյանը:- Աշնանը՝ սեպտեմբերին կամ հոկտեմբերին երեւանում համերգ կունենամ:

Ուրեմն, սպասում ենք քեզ, բարեկամ:

Ս. Գ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԴԱՐՈՒՓՈՍԻՑ

2. Ասված գիտի, թե ինչ են ուզում Դարուփոսի կանայք

Ինչպես երեւում է, դարուփոսցի կանայք չեն ուզում վերջացնել կանանց միամսյակը: Ափո Գեւոն, որը լավ է ճանաչում կնոջ բնույթը (ամուսնացել է ութ անգամ, մի ութսուն էլ սիրած կին է ունեցել), արդեն սկսել է ինքն իրեն կասկածել: «Այ քե պան, այ քե պան, էս կնանիք էս ինչ են անում»: Իսկ կանայք պարզապես ցույց են անում ու միտինգ: Ցույցից ու միտինգից առաջ Դարուփոսի հիմնը երգեցին, բայց, չգիտես ինչու, երգեցին նաեւ «Խեղճ մտեցին մեռավ լալեն» երգը: Երգում էին բոլորը, նրանք, ովքեր գիտեին հիմնի եւ երգի տեքստերի բառերը, նաեւ նրանք, ովքեր չգիտեին տեքստերի բառերը: Վերջիններիս օգնելու համար միտինգի կազմակերպիչ գյուղի վարժարանի Պեդոն բաժանել էր տեքստերը: Ու ինչպես եկեղեցու ժամերգության ժամանակ՝ բոլորը երգում էին թղթերը ձեռքերին: Միտինգի ժամանակ անչափ խելոք բան ասաց գյուղական ակումբի վարիչ Սիրուսը.

- Ի՞նչ է ուզում կինը: Սա դարերով չարչրկված հարց է, եւ ոչ ոք սրա պատասխանը դեռ չի տվել:

Ասված վկա, լավ ասաց: Այս խոսքն անչափ դուր եկավ նույնիսկ Ափո Գեւոյին: Բայց ակումբի վարիչ Սիրուսն ավելի պարզ բացատրեց իր միտքը.

- Եթե կնոջ շրջապատում եղած մարդկանց համար պարզ է, թե ինչ է ուզում կինը, ապա շրջապատի բոլոր մարդիկ երջանկանում են: Իսկ եթե ոչ ոք դա չի հասկանում, ապա չորս բոլոր քառս ու ավերածություն է ստեղծվում:

Ափո Գեւոն իր 78 տարեկանում 624 կնոջ շատ լավ էր ճանաչել, որոնցից 538-ը խելոք կանայք էին եղել: Բայց Ափո Գեւոն ասաց, որ աշխարհի ամենախելոք կինը ակումբի վարիչ Սիրուսն է:

Երբ միտինգն ավարտվեց, եւ Կոկո Սարոյի գրած բանաստեղծությունները տարան հանձնելու սահմանադրականի նախագահին, գյուղի ուսուցիչ Սերգոն, այնուամենայնիվ, ցանկացավ իմանալ ինչ էին ուզում կանայք: Առավել հանգամանալից պատասխան տվեց միտինգավարուհի տիկին Փումփուշը.

- Մեզ համար այս տոնական միամսյակը բնավ տոնական չէր, որովհետեւ մենք այսօր ավելի կարեւոր հարցեր ենք լուծում՝ քաղաքական, գլոբալ հարցեր: Բայց մենք չենք տխրում, մենք մեր պահանջներն ուղեկցում ենք երգով, երաժշտությամբ: Մենք այսօր իրավունք չունենք տանը նստելու եւ ճաշ եփելու: Մենք բոնակալների ճաշն ենք եփելու: Մեր երկրի բոլոր հարցերն կանայք, չքնաղ մայրերը, քաղցրիկ դուստրերը պետք է համախմբվեն ժողովրդավարության պահպանմանն ուղղված երկրի կանանց հասարակական շարժման շուրջ:



Այս կոչն այնքան էլ չոգեւորեց միտինգի մասնակիցներին, որովհետեւ Դարուփոսում այնքան էլ շատ թվով հարգի կանայք ու քաղցրիկ դուստրեր չկային:

Ասված չէա, որ երբեւէ հայտարարվի կանանց տարի: Թե չէ՝ ամեն օր միտինգի ու ցույցի պիտի գնան դարուփոսցի կանայք, եւ դարուփոսցի տղամարդիկ ժամերով պիտի սպասեն իրենց կանանց՝ սոված, ծարավ, առանց կնոջ հոգատարության եւ ջերմության: Այդ ջերմությունը կանայք ծախսում են միտինգներում:

Բայց ավելի վատն էլ կա. հիմա նրանք ուզում են Դարուփոսի խորհրդարանի՝ Դար-փոս-հոսի պատգամավոր ընտրվել: Բայց դրա մասին հաջորդ անգամ...

Դարուփոսից ստացված նամակն ընթերցեց
ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԱՆԸ

ԵՐԵՒԱՆՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՁԵԶ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Գրասենյակային եւ տան համար նախատեսված կահույքի, տնտեսական ապրանքների եւ սարքերի, համակարգչային տեխնիկայի եւ օժանդակ սարքավորումների ու այլ ապրանքների աճուրդին (բաց/դասական):

Աճուրդը տեղի կունենա ապրիլի 13-ին, ժամը 10:00-17:00, դեսպանատան պահեստում: Հասցեն՝ Արարատյան 90:

Ապրանքները կարող եք զննել աճուրդի վայրում ապրիլի 12-ին, ժամը 10:00-17:00: Ապրանքների զննումն անվճար է, եւ դուք կստանաք աճուրդի անցկացման մանրամասն պայմաններն ու վաճառվող ապրանքների խմբավորման ցուցակները:

Ապրանքները կվաճառվեն «այնպես, ինչպես կան» (դեսպանատունը պատասխանատվություն չի կրում ապրանքների որակի համար):

Անձինք, ովքեր գնումներ անելիս ազատված չեն հարկերից եւ մաքսավճարներից, իրենց հարկային եւ մաքսային վճարումների համար պատասխանատու են հայկական պետական համապատասխան մարմիններին:

Աճուրդի հետ կապված տեղեկությունների համար զանգահարել՝
Ռոբերտ Քրուկ 09 430 815
Հրաչ Ասոյան 09 406 986

AMERICAN EMBASSY, YEREVAN INVITES YOU TO PARTICIPATE

In Auction (OPEN BID, CLASSIC) of office and household furniture, appliances and equipment, computers and accessories/peripherals, and other assorted items. The sale will be conducted in the Embassy Warehouse, at 90 Araratian str., Charbakh district, on April 13, 2002, 10 a. m. until 5:00 p. m. local time.

The inspection of items may be done at the sale site for free on Saturday, April 12, from 10:00 AM- 5:00 PM local time, and you will be provided with a list of lots and detailed instruction and terms of auction. The lots will be sold 'as is, where is' (the U. S. Embassy will not guarantee the quality of the merchandise).

Individuals/Physical entities, who are not entitled to receive duty-free diplomatic purchases will be responsible for payment of all taxes and customs fees to the appropriate Armenian authorities.

Contact persons for auction are:
Robert Grook: phone 09 430 815
Hrach Asoyan: phone 09 406 986

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 2003-2004 ուսումնական տարվա ընդունելությունը մագիստրոսի կոչում շնորհող հետեւյալ ծրագրերով՝

- ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ
- ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ
- ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ
- ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

Բարձրագույն կրթությունը եւ անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր են

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է
ապրիլի 14-ը, ժ. 15^00
Տեղեկությունների համար դիմել՝
Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 գրասենյակ
Հեռ. 51-27-93, 51-27-92

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն թվականի մայիս ամսին մոր եւ մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնում (Մաշտոցի 22) իրականացվելու է անպտղության բուժում արհեստական բեղմնավորման (փորձանոթային) եղանակով:

Աշխատանքները կատարելու են ֆրանսիացի բժիշկները՝ պրոֆ. ժան Պիեռ Ֆրանկելբալմի անմիջական մասնակցությամբ: Ցանկացողները կարող են դիմել մինչեւ ապրիլի 20-ը:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել՝
53 13 42, 53 85 35

«Արմենտելը» տեղեկացնում է

Սույն թվականի ապրիլի 1-ից «Արմենտելի» կողմից սկսվել է «900 աուդիոտեքս (հավելավճարով) ծառայությունների» մատուցումը:

Բաժանորդների ուշադրությանն ենք ներկայացնում թվային կայաններից դեպի 900 աուդիոտեքս (հավելավճարով) ծառայություն զանգահարման կարգը:
0+900+xxx
0+901+xxx
0+906+xxx
0-ն ներհանրապետական կոդն է
xxx-ը 000-ից մինչեւ 999 հեռախոսահամարներ են

Հաշվի առնելով, որ նշված ծառայությունը վճարովի է, բաժանորդները կարող են արգելափակել 0 900 զանգերը, որպեսզի զերծ մնան անցանկալի ելից զանգերից:

	Սկավառակային հեռախոսի առկայության դեպքում բաժանորդը պետք է հավաքի	Ստեղնային (կոճակային) հեռախոսի առկայության դեպքում բաժանորդը պետք է հավաքի
Դեպի 900 ծառայության ելից զանգերի սահմանափակում	133abcd AC	*33*abcd*AC#
Դեպի 900 ծառայության ելից զանգերի ակտիվացում	134 abcd	#33*abcd#

Abcd-ն նշանաբանն է 4 թվային նիշով
AC-ն 01-05 սահմանափակման տեսակի կոդը
01-սահմանափակվում է միայն միջազգային զանգերի ելքը (հեռավոր արտասահման)
02-սահմանափակվում է միջազգային եւ ԱՊՀ երկրներ զանգերի ելքը
03-սահմանափակվում է միջազգային, ԱՊՀ երկրներ, դեպի ՀՀ տարածք, ավելացած արժեքով ծառայություններ (090) ուղղված զանգերի ելքը
04-սահմանափակվում է միջազգային, ԱՊՀ երկրներ, դեպի ՀՀ տարածք եւ բջջային բաժանորդներին, ավելացած արժեքով ծառայություններ (090) ուղղված զանգերի ելքը
05-սահմանափակում է բոլոր ելքային զանգերը (միջազգային, ԱՊՀ երկրներ, դեպի ՀՀ տարածք, բջջային եւ դեպի տեղական հեռախոսային ցանց, ավելացած արժեքով ծառայություններ (090) ուղղված զանգերի ելքը):

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Բնական գազի հարգելի բաժանորդներ

Օգտվեք միայն գործարանային արտադրության գազասարքերից, պիտանի ու մաքրված ծխնիներից: Գազի սարքավորումների օգտագործման կանոնները չպահպանելը կարող է վթարների եւ դժբախտ դեպքերի պատճառ հանդիսանալ:
Վստահեք եւ համագործակցեք ներտնային գազի համակարգը սպասարկող ընկերությունների հետ:
Դա ձեր անվտանգության ապահովման երաշխիքն է:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

529353 ստանալ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Վաճառվում է** 3 սենյականոց բն. Վարդանանց 28, բն. 34, 9/3 հաստեղում, բ/ս 81,2 քմ, կապիտալ վերանորոգված, ունի սառը եւ տաք ջրի բաք, լողասենյակի հատակը ջեռուցվող, պատուհանները ծայնամեկուսիչ եվրոպական, օդորակիչ, արբանյակային ալեհավաք, 6 պահարան, մուտքի մոտ 2 մեծ երկաթյա պահարան եւ ավտոնավակ: Գինը՝ 45.000 դոլար: Հեռ.՝ 55-14-82, առանց միջնորդի:
- «Աշխատանքի հրավեր» Ռուսական միջազգային կազմակերպությունը աշխատանքի է հրավիրում 18-ից բարձր տարիքի անձանց: Հեռ.՝ 55-31-46 (տուն), 27-44-28 (աշխ. ժ. 11-13):
- Շտապ պահանջվում են կահույքագործներ, զոդողներ, փականագործներ: Պայմաններին ծանոթանալու համար զանգահարել՝ 63-70-80, Առամ:
- Վաճառվում է 80 բասանոց գերմանական ակորդեոն: Գինը՝ 40 դոլար: Հեռ.՝ 484324:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քորթիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղն աշխատանքի է հրավիրում մեխանիկների հետեւյալ որակավորմամբ.

շինարարական տեխնիկայի մասնագետ, որը կկատարի շինարարական տեխնիկայի վիճակի ստուգման, ինչպես նաեւ վերանորոգման աշխատանքներ:

Թեկնածուները կարող են զանգահարել Քորթիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակ՝ 59-33-88 հեռախոսահամարով:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բաղրամյանց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 2. 4. 2003 Գինը՝ 100 դրամ

«ՀԱՅԱԳՐՈԲԱՆԿ» ԲԲԸ

www. agrobank.am www. agrobank.am www. agrobank.am www. agrobank.am www. agrobank.am www. agrobank.am

«Հայագրոբանկ» ԲԲԸ բոլոր մասնաճյուղերում տրամադրվում են ոսկու գրավադրմամբ վարկեր. գրավադրվող ոսկու մինչեւ 100% չափով. 15 տոկոսի ընթացքում:

«Հայագրոբանկ» ԲԲԸ վաճառում է իր սեփականությունը հանդիսացող հետեւյալ անշարժ գույքը

Հ/Հ	Գրանցման հասցե (վայրը)
1.	ք.Երեւան, Քանաքեռ,1 նրբ. 35 տուն 2 հարկանի առանձնատուն 140 քմ մակերեսով, 600 քմ հողամաս
2.	ք.Երեւան, Ս.Գորկու փող. 43 2 հարկանի առանձնատուն 0.0253 հա հողամաս, 250 քմ մակերեսով
3.	ք.Երեւան, Նուբարաշենի 2/1 (կից խանութ) 0.0206 հա հողամաս, 88.41 քմ մակերեսով
4.	ք.Ջերմուկ, Առողջարան, 10 հարկանի, (կիսակառույց), 20200 քմ մակերեսով, 2 հա տարածքով
5.	ք. Գավառ, «Սարք» ԲԲԸ մեխանիկական գործարան
6.	ք. Ծաղկաձոր, մանկական ճամբար (կիսակառույց) 1900 քմ մակերեսով, 2 հա հողամասով
7.	Արագածոտնի մարզ, գյուղ Ցամաքասար, վարելահող
8.	Արագածոտնի մարզ, գյուղ Արուճ, առանձնատուն
9.	Արագածոտնի մարզ, գյուղ Աուսեր, բնակելի տուն
10.	Ալավերդի, Սանահին, առանձնատուն
11.	ք. Հրազդան, առանձնատուն
12.	Գեղարքունիքի մարզ, գյուղ Ձոլաքար, առանձնատուն
13.	Արմավիրի մարզ, Բաղրամյան ավան, բնակելի տուն
14.	ք. Դիլիջան, բնակելի տուն
15.	Արարատի մարզ, գյուղ Լուսառաս, բնակելի տուն
16.	Արարատի մարզ, գյուղ Ներքին Դվին, հողամաս
17.	Օգտագործված գյուղմեքենաներ
18.	Կոտայքի մարզ, գյուղ Ձովունի. Կիսակառույց շինություն 340 քմ տարածքով, 0.5 հա հողամասով: Հարմար է ռեստորանի կամ կազինոյի համար:
19.	Քաղաք Կապան, Բաղրամյան 6/81, չորս սենյականոց բնակարան (ընդ. մակերեսը՝ 72.4քմ)
20.	Գեղարքունիքի մարզ, գյուղ Ձոլաքար, երկհարկանի առանձնատուն, տնամերձ հողամասով, օժանդակ կառույցով
21.	Քաղաք Հրազդան, Նոյեմբերյան փող. 36, ութ սենյականոց, երկհարկանի առանձնատուն (ընդ. մակերեսը՝ 319.71քմ)
22.	Քաղաք Արթիկ, Տեր-Գաբրիելյան փող. 18, վեց սենյականոց երկհարկանի առանձնատուն (ընդ. մակերեսը՝ 115.9քմ)
23.	Քաղաք Վայք, Շահումյան փող. 8/36, հինգ սենյականոց բնակարան (ընդ. մակերեսը՝ 153.1քմ)
24.	Քաղաք Ալավերդի Սանահին քաղամաս տուն 117, երկու սենյականոց առանձնատուն (ընդ. մակերեսը՝ 161քմ)
25.	Քաղաք Վարդենիս, Երեւանյան փող. 71, մեկ հարկանի առանձնատուն, կիսանկուղով եւ 1800քմ հողամասով (ընդ. մակերեսը՝ 384.1 քմ)
26.	Քաղաք Ստեփանավան, Երիտասարդական փող. 11, երկ հարկանի առանձնատուն տնամերձ հողամասով, օժանդակ կառույցներով (ընդ. մակերեսը՝ 246քմ)
27.	Արմավիրի մարզ, գյուղ Աղավնատուն, մեկ հարկանի առանձնատուն 1900քմ հողամասով, օժանդակ կառույցներով (ընդ. մակերեսը՝ 271.5քմ)
28.	Քաղաք Չարենցավան, երկրորդ միկրո, առաջին թաղամաս շենք 7, բն.3, երեք սենյականոց բնակարան (ընդ. մակերեսը՝ 77.2քմ)
29.	Քաղաք Աբովյան, Քասախի 2Ա, յոթ սենյականոց, մեկ հարկանի առանձնատուն, կիսանկուղով, տնամերձ հողամասով (ընդ. մակերեսը՝ 305.4քմ)
30.	Արարատի մարզ, գյուղ Արեւաբույր, յոթ սենյականոց երկհարկանի առանձնատուն, տնամերձ հողամասով, օժանդակ կառույցներով (ընդ. մակերեսը՝ 200քմ)
31.	Տիգրան Մեծի 65Ա վարչական շենք (ընդ. մակերեսը՝ 2325 քմ), 0.3 հա հողամասով, օժանդակ շինություն ներով (ընդ. մակերեսը՝ 785 քմ)
32.	Եղվարդի համակցված կերերի գործարան

Գույքի արժեքը կարելի է վճարել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մաս-մաս

Առաջարկով շահագրգիռ անձինք եւ կազմակերպությունները կարող են դիմել Հայագրոբանկ ԲԲԸ (Երեւան, Խորենացի 7ա)

Հեռ. 53-86-72, 53-58-32

ՀԱՅԱԳՐՈԲԱՆԿ ԲԲԸ 5000 ԱՄՆ ԴՈԼԱՐ ԵՎ ԱՎԵԼԻ ԿԱՆԽԻԿ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

❖ Աննախադեպ առաջարկ

Դրամական փոխանցումներ իրականացնող հաճախորդներին առավել բարենպաստ պայմաններ առաջարկելու նպատակով 2002թ. հուլիսի 01-ից «Հայագրոբանկ» ԲԲԸ ոչ միայն բավականաչափ իջեցրել է դրամական փոխանցումներից գանձվող միջնորդավճարները, այլ նաեւ ներդրել է փոխանցումներն իրականացնելու անվճար տարբերակ, որի էությունը կայանում է նրանում, որ բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական այն անձինք, ովքեր «Հայագրոբանկ» ԲԲԸ միջոցով կփոխանցեն 5000 ԱՄՆ դոլար եւ ավելի գումար, փոխանցումը կիրականացնեն անվճար: Պետք է նշել, որ վերը նշվածը վերաբերում է միայն կանխիկ մուտքագրված 5000 ԱՄՆ դոլար եւ ավելի գումարների փոխանցմանը:

AGRO-UNISTREAM EXPRESS

«Հայագրոբանկի» մասնաճյուղերում իրականացվող դրամական փոխանցումներին ավելացել է եւս մեկը՝ AGRO-UNISTREAM EXPRESS համակարգը: Այս համակարգով կարելի է փոխանցումներ իրականացնել ՌԴ մայրաքաղաքից դեպի Հայաստանի ցանկացած շրջան, բացառությամբ՝ Երեւան: Փոխանցումներն իրականացվում են ԱՄՆ դոլարով, առանց հատուկ հաշիվ բացելու: Նշված համակարգով փոխանցումներ կարելի է իրականացնել «Հայագրոբանկի» բոլոր մասնաճյուղերից, բացառությամբ Երեւան քաղաքի մասնաճյուղերի: Փոխանցման համար (անկախ գումարի չափից) վճարվում է գումարի 1 տոկոսը:

AGRO-AR-EXPRESS

Դրամական փոխանցումների այս համակարգի առավելությունն այն է, որ ծրագրի մեջ ներգրավված են «Հայագրոբանկի», «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿԻ» եւ ռուսաստանյան «ԻՄՊԵԿՍԲԱՆԿԻ» բազմաթիվ մասնաճյուղեր ու բաժանմունքներ (Հաճախորդների սպասարկման մոտ 100 կետ), ինչը հնարավորություն է տալիս դրամական փոխանցումներ իրականացնել Ռուսաստանի ցանկացած քաղաքից Հայաստանի ամենահեռավոր շրջաններ: Փոխանցումները կատարվում են ԱՄՆ դոլարով, անձնագրային տվյալների հիման վրա, առանց հատուկ հաշիվ բացելու: Անխափան գործող լայնածավալ ցանցը հնարավորություն է ընձեռում AGRO-AR-EXPRESS դրամական փոխանցումների ծրագրում ընդգրկված մասնաճյուղերի ու բաժանմունքների միջոցով Հայաստանից Ռուսաստան եւ հակառակ ուղղությամբ փոխանցումներ կատարել ցածր գներով:

AGRO-AR-EXPRESS համակարգում ընդգրկված են «Հայագրոբանկի» բոլոր մասնաճյուղերը, բացառությամբ՝ Երեւանի:

ԳՈՐԾԱՐՔՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԵՐ	
AGRO-AR-EXPRESS ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
1 Փոխանցում ՌԴ-ՀՀ ուղղությամբ	-	1%
2 Փոխանցում ՀՀ-ՌԴ ուղղությամբ	-	0,75%

Ուշադրություն Հայագրոբանկ ԲԲԸ վաճառում է

1. Բանկոմատներ (NCR5684 8Mb RAM, պրոցեսոր՝ 486 եւ NCR5670 8Mb, պրոցեսոր՝ 386)
2. POS տերմինալներ («VERY FONE», TRANZ 460)
3. Պլաստիկ քարտերի անհատականացման սարք՝ Embosser (DATA CARD, Model 280)
4. Պլաստիկ քարտերի վրա գունավոր գրաֆիկ պատկերներ տպելու սարք՝ Image Card Express (DATA CARD)

Առաջարկով շահագրգիռ կազմակերպությունները կարող են դիմել Հայագրոբանկ ԲԲԸ գլխամասային գրասենյակ՝ Երեւան, Խորենացի 7ա: Հեռախոս՝ 532732

Հայագրոբանկի համակարգում 2003թ. ապրիլի 3-ից

ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների համար, կապված տոկոսների վճարման հաճախականությունից, արժույթի տեսակից եւ ավանդի գումարի մեծությունից, գործում են հետեւյալ տարեկան տոկոսադրույքները՝

Ֆիզիկական անձանց համար

30 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
	4.0	3.0
31 - 60 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	4.5	3.5
ժամկետի վերջում	5.0	4.0
61 - 90 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	5.5	4.5
ժամկետի վերջում	6.0	5.0
91 - 180 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	6.5	5.5
ժամկետի վերջում	7.0	6.0
181 - 360 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	7.5	5.0
ժամկետի վերջում	8.0	5.5

ժամկետային ավանդների գումարի նվազագույն չափը սահմանվում է՝

- 50.000 ՀՀ դրամ
- 100 ԱՄՆ դոլար

Ընդ որում՝

- 50.0 միլիոն ՀՀ դրամ եւ ավել գումարի
- 100.0 հազար ԱՄՆ դոլար եւ ավել գումարի

ժամկետային ավանդների ընդունումը եւ տոկոսադրույքների սահմանումը իրականացվում է յուրաքանչյուր առանձին դեպքում համաձայնեցնելով Վարչության նախագահի հետ:

Ցպահանջ ավանդների ընդունման համար սահմանված է տարեկան 3% տոկոսադրույք:

Իրավաբանական անձանց համար

30 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
	6.0	4.5
31 - 60 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	6.5	5.0
ժամկետի վերջում	7.0	5.5
61 - 90 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	7.5	6.0
ժամկետի վերջում	8.0	6.5
91 - 180 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	8.5	7.0
ժամկետի վերջում	9.0	7.5
181 - 360 օր ժամկետով		
Տոկոսների վճարման հաճախականությունը	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
	մինչեւ 50.0 մլն.	մինչեւ 100.0 հազ.
Ամսական	9.5	6.5
ժամկետի վերջում	10.0	7.0

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 8. 4. 2003 Գինը՝ 100 դրամ